

17724

Լ. ՄԱՆԳԵՂՏԱՄ, Ն. ԱԵՐԻՎ, Պ. ՏՈՒՄՈՒՆԻՎ,

ԱՅԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ
ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

324
Ա. - 25

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏՈՒՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԾՆ • 1939

15 JAN 2010

Գրալեռուարթեր բոլոր յերկրների, միացե՛ք

26 SEP 2006

394
02-95

Մ

Լ. ՄԱՆԴԵՎԻՏՍԱՄ, Ն. ՈՒԲՐՈՎ, Պ. ՏՈՒՄԱՆՈՎ

ԱՅԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ
ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ • 1939

17824

24.06.2013

ՄեթՍՀ Գերագույն Խորհրդի յերկրորդ սեսիայում ընդունվեց Ընտրական Ռեենք—«Կանոնադրություն աշխատավորների ղեպուտատների յերկրային, մարզային, ոկրուգային, շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունների մասին»:

Միութենական մյուս հանրապետությունների Գերագույն Խորհուրդների սեսիաներում և ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների սեսիաներում նույնպես ընդունված են Կանոնադրություններ՝ աշխատավորների ղեպուտատների տեղական Խորհուրդների ընտրությունների մասին:

Մեր յերկիրը գտնվում է քաղաքական մեծադույն կամպանիայի նախորյակին—ամբողջ Խորհրդային Միության մեջ մոտենում են աշխատավորների ղեպուտատների բոլոր տեղական Խորհուրդների ընտրությունները:

Աշխատավորների ղեպուտատների տեղական Խորհուրդների ընտրություններով ավարտվում ե պետական իշխանության բոլոր որդանների կառուցումն ըստ Ստալինյան Սահմանադրության—Գերագույն Խորհուրդներից մինչև գյուղական Խորհուրդները ներառյալ:

Առաջիկա ընտրություններին իր հետագա գործնական լրտեսումն և ստանում ՀամԿ(բ)կ ԽՎՊ Համագումարում ընկեր Ստալինի դրած խընդիրը՝ «Անշեղորեն կիրառել կյանքում մեր սոցիալիստական Սահմանադրությունը, մինչև վերջ իրականացնել յերկրի քաղաքական կյանքի դեմոկրատիզմացիան»:

Աշխատավորների ղեպուտատների տեղական Խորհուրդների առաջիկա ընտրությունները—այլ քաղաքական հսկայական կարևորություն ունեցող համաժողովրդական գործ ե: Մեր յերկրի, մեր Խորհրդային մեծ Միության ժողովուրդները առաջին անգամ տեղական Խորհուրդները պետք ե ընտրեն ըստ Ստալինյան Սահմանադրության, իրենք պետք ե ակտիվ մասնակցություն ցույց տան ամբողջ ընտրական կամպանիայի անցկացմանը: Միայն ընտրական հանձնաժողովներում պետք ե աշխատեն 6—7 միլիոն մարդ: Պետք ե ընտրվեն տեղական Խորհուրդների մոտ մի միլիոն յերեք հարյուր հազար ղեպուտատներ:

Աշխատավորների ղեպուտատների տեղական Խորհուրդների ընտրություններն ե'լ ավելի կամրացնեն պետական իշխանության որդանները, ե'լ ավելի կկապեն նրանց իրենց ընտրողների հետ: Դրանով

Ա. МАНДЕЛЬШТАМ, Н. РЕБРОВ, П. ТУМАНОВ
ВЫБОРЫ В МЕСТНЫЕ СОВЕТЫ
ДЕПУТАТОВ ТРУДЯЩИХСЯ
Государственное издательство полит. литературы
Бревай 1939



6215

39

իսկ ե՛լ ավելի կամի մեր սոցիալիստական պետության անխռորդակելի գորությունը: Ընկեր Ստալինը կուսակցության XV համագումարում ասաց. «Ինչումն ե մեր պետական ազարտի ուժը: Նրանում, վոր նա Խորհուրդների միջոցով իշխանությունը կապում և բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների հետ: Նրանում, վոր Խորհուրդները կառավարման զալրոց են տասնյակ և հարյուր-հազարավոր բանվորների և գյուղացիների համար»:

Առաջիկա ընտրությունները կտան մասսաների քաղաքական ակտի-վության նոր վերելք: Ժողովուրդն առաջ կթաշի և կընտրի տասնյակ և հարյուր-հազարավոր նոր մարդիկ, վորոնք անոտհմանորեն նվիրված են մեր սոցիալիստական հայրենիքին, ստալինյան տիպի նոր պետական գործիչներ:

Ընտրությունների ընթացքում կհայտաբերվէն տեղական Խորհուրդների գործնական աշխատանքի բոլոր թերությունները, վորակեազի վճռապես վերացվեն այդ թերությունները, բարելավվի Խորհուրդների ամբողջ աշխատանքը և դրանով իսկ ե՛լ ավելի ամրացվեն պետական իշխանության որդանները—ամրապնդվի ու ընդլայնվի պրոլետարիատի դիկտուրայի բաղան:

Առաջիկա ընտրություններին Խորհրդային մեծ Միության ժողովուրդները՝ հարստացած Գերազույն Խորհուրդների ընտրությունների փորձով, զինված կուսակցության XVIII համագումարի պատմական վորոշումներով, ամբողջ աշխարհի առջև կցուցադրեն իրենց անխռորդակելի հզորությունը, իրենց բարոյական-քաղաքական միասնությունը, ցույց կտան կոմունիստների ու անկուսակցականների ստալինյան բլոկի անպարտելի ուժը:

Ընտրությունների հաջողությունը շատ բանում կախված կլինի բուն ընտրությունները ժամանակին նախապատրաստելուց ու ճիշտ կազմակերպելուց՝ Սահմանադրության և Ընտրական կանոնադրության պահանջների համապատասխան:

Այս բրոցյուրի նպատակն ե՝ ողնել մեր բազմամիլիոն ակտիվին ավելի լավ պարզաբանելու առաջիկա ընտրական կամպանիայի առանձնահատկությունն ու բարգությունը աշխատավորների գեպուտատատների բոլոր տեղական Խորհուրդների միաժամանակ ընտրվելու հետեանքով, ողնել ավելի լավ հասկանալու կազմակերպական-տեխնիկական հարցերը, վորոնք քաղաքական մեծ նշանակություն ունեն ընտրությունները կատարելիս:

I ԳԼՈՒԽ

ԱՅԻԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐԸ ԽՀՀՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔՆ ԵՆ

ԽՍՀՄ-ն բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետություն ե, սոցիալիստական հասարակության պետություն:

Խորհրդային հասարակությունը սոցիալիստական և այն պատճառով, վոր նրա անտեսական հիմքն և կազմում անտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, վոր հաստատված և տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի հետևանքով, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարզու ձեռքով մարդու շահագործումը վոչչացնելու հետևանքով: Մեր հասարակության մեջ իրականացված և սոցիալիզմի ոկրությունը՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքը», իսկ աշխատանքը վոչ միայն պարտականություն ե, այլև պատիքի գործ ամեն մի աշխատունակ քաղաքացու համար:

ԽՍՀՄ-ի հասարակական կառուցվածքն ապահովում է մեր հայրենիքի հարստության ու հզորության անշեղ աճումը, բոլոր աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի հարաձուն վերելքը:

ԽՍՀՄ-ի քաղաքական հիմքը կազմում են աշխատավորների դեպուտատների Խորհուրդները:

Խորհուրդները ԽՍՀՄ-ի քաղաքական հիմքն են այն պատճառով, վոր մեր յերկրում ամբողջ իշխանությունը պատկանում է քաղաքի ու գյուղի աշխատավորներին հանձին աշխատավորների գեպուտատների Խորհուրդների:

Խորհրդային իշխանությունը իսկական ժողովրդական իշխանություն ե, վորովհետեւ Խորհուրդների միջոցով ԽՍՀՄ-ի բոլոր աշխատավորները՝ բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան անմիջական ու մասսայական մասնակցություն են ցույց տալիս պետական գործերի կառավարմանը, անմիջականորեն կառավարում են սոցիալիստական պետությունը:

Ահա թե ինչու աշխատավորների գեղուտատաների տեղական Խոր-Հուրդների առաջիկա ընտրությունները հիրավի համաժողովրդական դրս են, նրանց յելքի համար խիստ շահազրգութած են սոցիալիզմի յերկրի բոլոր աշխատավորները:

1937 թվի գեկտեմբերին և 1938 թվի հունիսին ընտրվեցին ԽՍՀՄ ներազույն Խորհուրդը և միութենական ու ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդները: Այս ընտրությունները նշանակալից դարձան կոմունիստների ու անկուսակցականների ընտրական բլոկի փայլուն հաղթանակով:

Ընտրությունները ցույց տվին խորհրդային ժողովրդի բարոյական-քաղաքական միասնության անխորտակելի հզորությունը, նրա նվիրվածությունը բոլշևիկյան կուսակցության ու Խորհրդային կառավարությանը:

Ըսթացիկ 1939 թվին միութենական ու ավտոնոմ հանրապետություններում տեղի յեն ունենալու իշխանության տեղական որդանների ընտրությունները: ԽՍՀՄ աշխատավորները գաղտնի քվեարկությամբ մեր յերկու լավագույն մարդկանց կընտրեն աշխատավորների գեղուտատաների տեղական Խորհուրդների մեջ:

Տեղական Խորհուրդների առաջիկա ընտրությունների պատմական նշանակությունն այն է, վոր այս ընտրությունները կավարտեն իշխանության որդանների կառուցումն ըստ Ստալինյան Սահմանադրության:

Խորհուրդները պատմականորեն ծագել են առաջին անգամ մեր յերկում իրեն բանվորական մասսաների հեղափոխական ստեղծագործության արտահայտությունն, նրանք աճել ու ամրացել են կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու հետեւանքով:

Բանվոր դասակարգի հեղափոխական հանճարեղ մտածողներ ու առաջնորդներ Լենինը ու Ստալինը, հենվելով մարքսիզմի թեորիայի վրա, ընդհանրացրին պրոլետարիատի հեղափոխական պայքարի փորձը և ստեղծեցին ուսմունք Խորհուրդների մասին, իրեն բանվոր դասակարգի դիկտատուրայի պետական ձեր:

«Դեռևս 1905 թ. Լենինը գիտեր, վոր առանձին խորհուրդները հեղափոխական իշխանության սաղմերն են ցարիզմի տապալման ըր-ջանում: Բայց պետական մասշտաբով միավորված խորհրդային իշխանությունն, իրեն պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձեւ, այն ժամանակ նա գեռնու չգիտեր: Խորհուրդների հանրապետությունն իրեն պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձեւ, Լենինը հայտնագործեց միայն 1917 թ. և մանրամասն անցումային հասարակության քաղաքական կազմակերպության այդ ձեր հարցը մշակեց 1917 թ.

ամառը, գլխավորապես իր «Գետություն և հեղափոխություն պրքում»¹:

Բանվորական գեղուտատաների Խորհուրդներն առաջացան իրեն մասսաների անմիջական պայքարի որդաններ 1905 թ. բուրժուական գեմոկրատական հեղափոխության ընթացքում: Շուտով, հեղափոխության հզոր ծավալման հիման վրա, գործադուլային պայքարից զինվածադրության անցնելու հետևանքով բանվորական դեպուտատների Խորհուրդները զարձան ապատամբության որդաններ, ինքնակալության գեմ համահեղափոխական պայքար մզող որդանները:

ՈՍԴԲԿ Խ համագումարում, վոր կայացավ 1906 թվին Ստոկհոլմում, Լենինն իր «Յեղափակման խոսքում արգի մոմենտի և պրոլետարիատի գասակարգային խնդիրների հարցի մասին» նշեց Պլեխանովի սխալը, վոր կայանում եր նրանում, վոր «նա նեղություն չկրեց վերլուծելու, թե ինչ են ներկայացնում բանվորական դեպուտատների Խորհուրդները: Ի՞նչ են դրանք—հեղափոխական ինքնակարգության որդաններներ, թե՝ իշխանության սաղմնային որդաններ: Յես պնդում եմ, —ասաց Լենինը, —և այս թեզիսը չի կարող հերքվել, վոր սա պայքար և հեղափոխական իշխանության միջոցով»²:

Հակառակ տեսակետի վրա եյին կանգնած մենչեկները, վորոնք Խորհուրդները չեյին համարում վոչ ժողովրդի հեղափոխական իշխանության սաղմնային որդաններ, վոչ ել ապստամբության որդաններ: Մենշևիկները նրանց վրա նայում եյին, իրեն քաղաքային ինքնակարգությունների գեմոկրատացած որդանների:

Այսպիսով Լենինը, Հոկտեմբերյան հեղափոխությունից դեռ շատ առաջ, վերլուծելով բանվորական դեպուտատների Խորհուրդների ընույթը, նշեց, վոր նրանք վոչ միայն ապստամբության որդաններ են, այլև նոր հեղափոխական իշխանության սաղմնային որդաններ:

Լենինը գտնում եր, վոր ժողովրդի հեղափոխական իշխանության այս սաղմնային որդանները բուրժուական-դեմոկրատական հեղափոխության հաղթական յելքի դեպքում պետք ե դառնան ժամանակավոր հեղափոխական կառավարության որդաններ, պրոլետարիատի ու դյուզացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի որդաններ:

1905 թվին արված բոլշևիկյան այս լոգունդը իր լիակատար հաստատումն ստացավ 1917 թվի Փետրվարյան հեղափոխության մեջ:

«Խորհուրդների գաղափարն ապրում եր բանվորական մասսաների դիկտատության մեջ, և նրանք իրականացրին այդ գաղափարը ցարիզմի ապագավելու հենց հաջորդ որը, սակայն այն տարբերությամբ, վոր

1 Ստալին, Ապողեցիայի մասին, էջ 520:

2 Լենին, հ. IX, էջ 158:

1905 թվականին ստեղծվել եյին միմիայն բանվորների դեպուտատների Խորհուրդներ, իսկ 1917 թվականի փետրվարին, բոլշևիկների նախաձեռնությամբ, առաջ յեկան բանվորների և զինվորների դեպուտատների Խորհուրդներ»¹:

1917 թվի փետրվարին Ռուսաստանում կազմվեց իշխանությունը բուրժուազիայի և բուրժուականացած կալվածատերների ներկայացուցչներից: «Բայց բուրժուական կառավարության կողքին դոյցությունուներ մի այլ Եվրանություն՝ բանվորների և զինվորների դեպուտատների Խորհուրդը»²—բանվորների և գյուղացիների միութենական որդանը:

«...Ստացվեց յերկու իշխանությունների, յերկու դեկտատուրաների յուրահատուկ միահյուսում՝ բուրժուազիայի դեկտատուրայի հանձին ժամանակավոր կառավարության, և պրոլետարիատի ու գյուղացիության դեկտատուրայի՝ հանձին բանվորների և զինվորների գեպուտատների Խորհրդի:

Ստացվեց յերկիշխանություն»³:

Ապրիլյան թեզիսներում Լենինը կուսակցության և բանվոր դասակարգի առջև դրեց բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստականին անցնելու համար պայքարելու հեղափոխական պարզ հեռանկարը:

«Ընթացիկ մոմենտի առանձնահատկությունը Ռուսաստանում,— գրում եր Լենինը,—անցումն է հեղափոխության առաջին ետապից, վորը պրոլետարիատի անբավարար գիտակցության ու կազմակերպվածության հետևանքով իշխանությունը տվեց բուրժուազիային,—նրա յերկրորդ ետապին, վորն իշխանությունը պիտի տա պրոլետարիատի և գյուղացիության ամենաչքավոր խավերի ձեռքը»⁴:

Այնուհետև Լենինը նշում եր, վոր բանվորական դեպուտատների Խորհուրդները «հեղափոխական կառավարության միակ հնարավոր ձեռնուն...», վոր «վոչ թե պառամենտական հանրապետություն, —Բ. Դ. Խ.-ից վերադարձը դեպի նա մի քայլ կլիներ դեպի հետ, —այլ բանվորների, բատրակների, և գյուղացիների դեպուտատների Խորհուրդների հանրապետություն ամբողջ յերկրում, ներքեւց մինչև վերե»⁵:

Հենվերլ 1905 թվի հեղափոխության և 1917 թվի Փետրվարյան հեղափոխության փորձի վրա, Լենինը յերեան հանեց և թեորիապես

Հիմնավորեց Խորհրդային իշխանությունն իրեւ պրոլետարիատի դեպուտատուրայի պետական ձև։ Լենինը նշում եր, վոր բանվորական և զինվորական դեպուտատների Խորհուրդները «վերարտադրում են պետության այն ձևը, վորապիսին մշակում եր Փարիզի Կոմիտաննան...»⁶:

Իր «Կապահպանե՞ն արդյոք բոլցեկիները պետական իշխանությունը» աշխատության մեջ Լենինը տվել է խորհրդային պետական ապարատի հետեւյալ նշանավոր բնութագիրը, վորն ընդունելում է նրա բոլոր կողմերը և բացահայտում պրոլետարական իշխանության նոր քաղաքական կազմակերպության խկական եյությունը:

«Խորհուրդները նոր պետական ապարատ են, վորը տալիս է, առաջին՝ բանվորների և գյուղացիների զինված ուժ, ընդվորում այդ ուժը կարգած չե ժողովրդից, ինչպես չին մշտական բանակի ուժը, այլ ամենասերտ կերպով կապահած և նրա հետ ուսամական տեսակետից այդ ուժը անհամեմատ ավելի զոր է, քան նախորդները. հեղափոխական տեսակետից նա անփոխարինելի յե վորեւ ուրիշ ուժով։ Յերկրորդ՝ այդ ապարատը իր կազմի՝ ժողովրդի կամքով ընտրելի և փոփոխելի լինելու պատճառով, առանց բյուրոկրատական ձեւականությունների, շատ ավելի դեմոկրատական։ քան նախկին ապարատները։ Չորրորդ՝ նա ամուր կապ և տալիս ամենատարեր պրոֆեսիաների հետ, դրանով թեթևացնելով ամենանոր բնույթի ամենից տարբեր ու փորմներն առանց բյուրոկրատիայի։ Հինգերորդ՝ նա տալիս է ավանդարդի, այսինքն՝ կեղեգլած դասակարգերի, բանվորների ու գյուղացիների ամենայեռանգույն, առաջավոր մասի կազմակերպման ձևը, այսպիսով հանդիսանալով մի ապարատ, վորի միջնորդի կեղեգված դասակարգերի ավանդարդութը կարող է վոտքի հանել, դաստիարակել, սովորեցնել ու իր հետեւյանունել այդ դասակարգերի ամբողջ վիճակարի մասամբ, վորը մինչև այժմ միանգամայն գուրս եր գտնվում քաղաքական կյանքից, պատմությունից։ Վեցերորդ՝ նա հնարավորություն է տալիս պառամենտարիզմի ողուտները միացնել անմիջական և ուղղակի դեմոկրատիայի ոգուտին, այսինքն՝ հանձին ժողովրդի ընտրովի ներկայացուցիչների միացնել թե՛ որենսդրական ֆունկցիան և թե՛ որենքների կատարումը։ Բուրժուատիան պառամենտարիզմի համեմատությամբ սա այնպիսի մի քայլ է առաջ դեմոկրատիայի զարգացման մեջ, վորը համաշխարհային պատմական նշանակություն ունի»⁷:

1 Լենին, հ. XX, էջ 120:

2 Լենին, հ. XXI, էջ 258:

Խորհրդային պետական ապարատը ձուլվում է մասսաների հետ, Հանդիսանում և այլ մասսաների հզոր դործիքը, կոմունիզմի կառուցման գործիքը: Խորհրդային պետական ապարատի արմատական, սկզբունքային տարրերություններից մեկը բուրժուականից այն է, վոր «Հենց այն մասսաները, վորոնք նույնիսկ բուրժուական ամենադիմոկրատական հանրապետություններում... իրականության մեջ հազարավոր յեղանակներով ու խորամանկություններով հեռացվում էին քաղաքական կյանքին մասնակցելուց և դեմոկրատական իրավունքներից ու ազատություններից ողափելուց, այժմ ներդրավվում են մշտական ու անվերապահ, այն ել վճռական, մասնակցություն ցույց տալու պետության դեմոկրատական կառավարմանը»¹:

Խորհրդային իշխանությունը, հանդիսանալով բանվոր դասակարգի դիմումության ժամանական ձեռք, իրենից ներկայացնում է պետության նոր տիպ՝ արմատավես տարրեր բուրժուական պետությունից, ինչպես նաև նրա բուրժուական-դեմոկրատական և պառլամենտական ձերց:

«Խորհրդային կարգը մաքսիմում դեմոկրատիզմն է բանվորների և գյուղացիների համար և միևնույն ժամանակ այն նշանակում է խզում բուրժուական դեմոկրատիզմի հետ և առաջացում նոր, համաշխարհացին-պատմական տիպի դեմոկրատիայի, այն ե՝ պրոլետարական դեմոկրատիզմի կամ պրոլետարիատի դիմումությայի»²:

Բոլցեկյան կուսակցությունը հանդիսանում է պրոլետարիատի դիմումությայի առաջատարը, ուղղություն տվող, դեկավար ուժը:

Համամիութենական կոմունիստական (բոլցեկյան) կուսակցությունը գեկավարում է Խորհրդային պետությունը: Նա աշխատավորների առաջավոր ջոկատն է սոցիալիստական հասարակարգի ամրացման ու զարգացման համար մղած նրանց պայքարում և ներկայացնում է աշխատավորների բոլոր ինչպես հասարակական, այնպես ել պետական կազմակերպությունների գեկավարը կորիզը:

Բնիեր Ստալինը, զարդացնելով լենինի ուսմունքը Խորհրդային իշխանության, վորպես պրոլետարիատի դիմումությայի պետական ձեկի ժաման, սովորեցնում է, վոր «Խորհրդային իշխանությունը անդական Խորհրդադիմումների միավորումն ու ձեւավորումն է մի ընդհանուր պետական կազմակերպության մեջ...—միավորումն իրեւ Խորհուրդների հանրապետություն»³:

Խորհուրդների ուժը կայանում է նրանում, վոր նրանք «բուն իսկ մասսաների անմիջական կազմակերպություններն են, այսինքն՝ մասսա-

ների ամենից ավելի դեմոկրատական և, ուրեմն, ամենից ավելի հեղինակավոր կազմակերպությունները, վորոնք առավելադույն չափով հեշտացնում են նրանց մասնակցությունը նոր պետություն կազմակերպելու և այն կառավարելու գործին ու առավելագույն չափով սահմանույթը են անում (քայլապահությունը մասսաների հեղափոխական յեռագը, նախաձեռնությունն ու ստեղծագործական ընդունակությունները չին կացութաձեւի (սկլադ) կործանման համար մղվող պայքարում, նոր, պրոլետարական կացութաձեւի համար մղվող պայքարում»⁴:

Հենվելով հաղթական Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության փորձի և ուրիշ յերկրների պրոլետարական հեղափոխությունների փորձի վրա, լենինը նշեց, վոր Խորհուրդների հանրապետությունը պրոլետարիատի դիմումությայի այն դժուված հեղափոխական ձևն ե, վորին այժմ ուրիշ յերկրների բանվոր դասակարգը գործնականապես ի վիճակի յերբիշխանությունը նվաճելու և հաստատելու համար:

* * *

Ստալինյան Սահմանադրության կիրառումը նշանակեց պատմական շրջադարձ յերկրի քաղաքական կյանքում, նոր, բարձր աստիճան բանվոր դասակարգի դիմումությայի զարգացման ու ամրացման մեջ: Առցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում բերեց սոցիալիստական դեմոկրատիզմի նոր, զոր ծաղկում մեր յերկրում, պրոլետարիատի դիմումությայի բազայի լայնացում, վորը դարձավ «հասարակության պետական զեկավարման ավելի ճկուն, հետեարար՝ ավելի հզոր սիստեմ»⁵:

ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրության մեջ որևէսպարար արձանագրված ե, վոր ԽՍՀՄ-ի քաղաքական հեմքը կազմում են աշխատավորների դեմումությունները: Պարզ ե, վոր սա ամեննեին չի նշանակում Խորհրդային իշխանության բուն դասակարգային բնության փոփոխություն: Խորհրդային իշխանությունն ինչպես կար, այնպես ել մնում է իրեւ բանվոր դասակարգի դիմումությայի քաղաքական ձև: Խորհուրդները, վոր ընտրված են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա կազմոնի քվեարկությամբ, հանդիսանում են վերից մինչև վար մեր ամբողջ Խորհրդային պետական սիստեմի հետագա ծավալուն դեմոկրատացման արտահայտություն:

Դեմոկրատացման քաղաքականության հաղթանակն արտացոլում է այն քեծագույն փոփոխությունները, վոր տեղի յեն ունեցել խորհրդա-

1 Լենին, Հ. ՀХIV, Եջ 13:

2 Լենին, Հ. ՀХVII, Հայ. Եջ 26:

3 Ստալին, լենինիզմի հարցերը, Եջ 49, Հայկունհրատ, 1938 թ.:

4 Ստալին, լենինիզմի հարցերը, Եջ 48, Հայկունհրատ, 1938 թ.:

5 Ստալին, Զեկավարման ԽՍՀՄ-ության Սահմանադրության նախագծի մասին, Եջ 17, Կուսանական 1938 թ., Մասկավ:

յին հասարակության դասակարգային ստրուկտուրայի մեջ։ Նրանում լիկվիդացիայի յին յենթարկված շահագործող դասակարգերը, դոյություն ունեն յերկու նոր ու բարեկամ դասակարգեր՝ բանվորներն ու գյուղացիները, ծավալվում ու աճում և խորհրդային ինտելիգենցիան՝ սոցիալիստական հասարակության իրավահավասար անդամը։

Աշխատավորների գեպուտատաների Խորհուրդները հանդիսանում են ամբողջ խորհրդային ժողովրդի իշխանության որդանները, քանի վոր ԽՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է քաղաքի ու գյուղի աշխատավորներին։ Հանձին այդ Խորհուրդների։

Աշխատավորների գեպուտատաների Խորհուրդները բանտիր դասակարգի դիկտատորայի պետական ձեր հետագա զարգացումն են։ Աշխատավորների գեպուտատաների Խորհուրդներն աճել ու ամրացել են պրոլետարիատի դիկտատորայի նվաճման հետևանքով։ Խորհուրդների ԽՍՀՄ-ի քաղաքական այդ հիմքի հետագա ամեն կերպ ամրացումը հանդիսանում է պատմական մեծ խնդիրը՝ կոմունիստական հասարակության կառուցումը՝ հաջողությամբ լուծելու գլխավոր պայմանը։ Մեր աչքի առաջ տեղի ունեցող սոցիալիստական դեմոկրատիզմի վիթխարի ծավալումը ԽՍՀՄ-ում կենսագործում է լինիյան-ստալինյան այն թեղը, վոր պրոլետարիատի դիկտատորան միաժամանակ նաև պրոլետարական դեմոկրատիա յի։ Իսկ համաժողովրդական գեմոկրատիզմի հաղթանակն ինքը միենառուն ժամանակ նշանակում է բանվոր դասակարգի դիկտատորայի ամբողջ հզորության ու կազմակերպվածության բարձրացում մի նոր, ավելի բարձր աստիճանի։

Խորհրդային պետության ուժն ու հզորությունը հենվում են խորհրդային ժողովրդի՝ մարդկության պատմության մեջ չտեսնիված բարյական-քաղաքական միասնության վրա։ Միայն Լենինի-Ստալինի կուսակցության դեկապարության ընորհիվ ե իրականացված կոմունիստների ու անկուսակցականների կայուն, անխափ բլոկը, վորն այս պիսի փայլուն հաղթանակ տարավ 1937 և 1938 թվերի ընտրություններին։

Պրոլետարիատի քաղաքական իշխանության հենց հաստատման մում հենակ սոցիալիստական հեղափոխության թշնամիներն իրենց մատչելի բոլոր միջոցներով ձգտում եյին խախտել Խորհրդային պետության հզորությունը և թուլացնել նրան։ Այս պայմանում նրանք նորանապես ձգտում եյին ոգտագործել խորհրդային կազմակերպական ձեր, կարելու նրան հեղափոխական բոլեկիյան բովանդակությունից։

1917 թվի հուլիսին, այն շրջանում, յերբ Խորհուրդներում տիրում եր մենշևիկ-եսերական բլոկի բոնությունը, մենշևիկներն ու եսերները ջանում եյին Խորհուրդներն ոգտագործել ընդդեմ բանվոր դասակարգի։ Յերբ Խորհուրդները դարձան պրոլետարիատի դիկտատորայի որ-

գաններ, հակահեղափոխությունը ջանում եր Խորհուրդները հակառել բոլշևիկյան կուսակցությանը։ Ինչպես հայտնի յե, «Խորհուրդներն առանց կոմունիստների» լոգունդը չպրտեց Միլյուկովը Կրօնշտադտի հակահեղափոխական ապատամբության ժամանակի։ Այս լոգունդով հեղափոխության թշնամիները ջանում եյին խարել աշխատավորներին և թագդնել նրանցից թշնամու ձգտումները՝ վերականգնելու կապիտալիստների ու կարլածատերերի իշխանությունն ու սեփականությունը։

Բոլշևիկների կուսակցությունը համառ պայքար մզեց հանուն Խորհուրդների, մաքրեց գրանք ժողովրդի թշնամիներից, Խորհուրդները դարձրեց պրոլետարիատի դիկտատորայի որդաններ։

Բնկեր Ստալինը սովորեցնում է, վոր Խորհուրդների ամբողջ ուժն ու հեղափոխական հզորությունը կախված է այն բանից, թե ինչպիսի բովանդակությունն է և, բանը Խորհուրդների աշխատանքի բովանդակությունն է, բանն այն է, թե հատկապես ով է զեկավարում Խորհուրդները, հեղափոխականները, թե հակահեղափոխականները։

«...Բանը միայն Խորհուրդները չեն, իրեւ կազմակերպության ձեւ՝ ասում ե ընկեր Ստալինը, —թեսկետ այդ ձեռ ինքն ամենամեծ հեղափոխական նվաճում է։ Բանն, ամենից առաջ, Խորհուրդների աշխատանքի բովանդակությունն է, բանը Խորհուրդների աշխատանքի բնույթն է, բանն այն է, թե հատկապես ով է զեկավարում Խորհուրդները, հեղափոխականները»¹։

Կոմունիստական կուսակցության զեկավարությամբ Խորհուրդների աշխատանքը լցվում է Դոկտական հեղափոխական բովանդակությամբ, իսկ իրենք Խորհուրդները հանդիսանում են պրոլետարիատի դիկտատորայի որդաններ, կոմունիստական հասարակության կառուցման զոր գործիք։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բոլշևիկների կուսակցության զեկավարությամբ Խորհուրդները հաջող պայքար են մզել և մղում են հանուն կոմունիզմի գործի, զեկավարում են սոցիալիստական շինարարությունը։

Խորհուրդները զեկավարող բոլշևիկյան կուսակցությունից գեպի աշխատավորների ամենալայն մասսաները տանող շարժափոկերից մեկն են։ Յեկ սա հասկանալի յե, քանի վոր «Խորհուրդները, —ինչպես ասում եր ընկեր Ստալինը, —պրոլետարիատի դիկտատորայի ուղղակի արտահայտությունն են։ Խորհուրդների միջոցով են անցնում դիկտատորայի ամրապնդման ու սոցիալիզմի կառուցման բոլոր ու ամեն առակի ձեռնարկումները»²։

Մեր սոցիալիստական պետությունը գոյություն ունի կապիտալիստական պետությունների թշնամական շրջապատում։ Վորչափով վոր սոցիալիզմը հաղթանակ է տարել առաջմ միայն մեր յերկրում, այդ չափով արդի պայմաններում խոսք կարող է լինել մեր Խորհրդա-

¹ Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 655։

² Նույն տեղում, էջ 153։

յին սոցիալիստական պետության ամրությունն ու հզորությունը համակողմանի, առավելագույն չափով ուժեղացնելու մասին միայն:

Սոցիալիզմի հաղթանակն ամենմեխն չի նշանակում վոչ դասակարգային պայքարի թուլացում, վոչ ել «պետության մահացում»: Սոցիալիզմի ժամանակ պետության մահացման վերաբերյալ թշնամական ամեն տեսակ «թեորիաներ» մի նպատակ են հետանդում՝ զինաթափել բանվորների ու գյուղացիների սոցիալիստական սկզբությունը շրջապատող կապիտալիստական աշխարհի առջև: «Մենք պետության մահացման կողմնակից ենք: Յեվ մենք միաժամանակ կողմնակից ենք, վոր ուժեղացվի պրոլետարիատի դիկտատուրան, վորը մինչև այժմ գոյություն ունեցող պետական իշխանությունների մեջ ամենահուժկու և ամենահզոր իշխանությունն ե: Պետական իշխանության բարձրագույն զարգացում՝ պետական իշխանության մահացման համար պայմաններ նախապատրաստելու նպատակով, —ահա մարքսիստական ֆորմուլան»¹:

Համեկ(թ)Կ ԽVIII համագումարում տված իր դեկուցման մեջ, վորը ամենաթանգարժեք պահողն ե Համբանում մարքսիզմ-լենինիզմի թեորիայի մեջ, ընկեր Ստալինը, հենվելով Մարքսի-լենինի մեջ ուսմունքի վրա, թեորիապես ընդհանրացրեց վիթխարի յերկրի սահմաններում կատարված յերկու տասնամյակի խորհրդացին պետական շինարարության փորձը և զարգացքն սոցիալիստական պետության ուսմունքը: Ընկեր Ստալինը ցույց տվեց սոցիալիստական պետության դերը կապիտալիստական շրջապատման պայմաններում և դրանով իսկ նոր բարձրության հասցեց պետության վերաբերյալ մարքսիստական-լենինյան գիտությունը:

Ընկեր Ստալինի մեծագույն ծառայությունն այն ե, վոր նա համակողմանի մշակեց կապիտալիզմից կոմունիզմի անցման շրջանի պետության հարցը, բացահայտեց սոցիալիստական պետության զարգացման ուղին ու ձեւը և վերջնականապես լուծեց պետության բախույժարշը կոմունիզմի բարձրագույն փուլում կապիտալիստական շրջապատման պայմաններում:

Ընկեր Ստալինը նոր, համակողմանի մշակման յենթարկեց սոցիալիստական հեղափոխության թեորիան և ցույց տվեց, վոր կոմունիզմի առաջին և յերկրորդ փուլերը կարող են իրականացվել մեր յերկրում և կապիտալիստական շրջապատման պայմաններում: Յենվելով սրանից, ընկեր Ստալինը լուծեց կապիտալիստական շրջապատման պայմաններում սոցիալիստական պետության զարգացման ուղիների վերաբերյալ թեորիական կարեռագույն հարցը:

Ընկեր Ստալինն սպառիչ լիտակատարությամբ ցույց տվեց, վոր կա-

պիտալիստական ողակում գտնվող յերկիրը յենթակա յէ դրսից ուագմական հարձակման սպառնալիքին, ուստի նա իր տրամադրության տակ պիտի ունենա լավ մարզված բանակ, լավ կազմակերպված պատժիչ որդաններ և ամուր հետախուզություն, հետևաբար, պիտի ունենա իր բավականաչափ ուժեղ ուստությունը:

Մինչև այն ժամանակ, քանի դեռ չի վոչնչացված դրսից ուագմական հարձակումների վտանգը, քանի դեռ լիկվիդացիայի չի յենթարկված կապիտալիստական շրջապատումը, մինչև այն ժամանակ, քանի դեռ նա չի վոփիարինված սոցիալիստական շրջապատումով, —սոցիալիստական պետությունը կրահպանվի նաև կոմունիզմի շրջանում:

Ընկեր Ստալինն ուղղակի ցույց տվեց, վոր պետության վերաբերյալ մարքսիզմի միքանի ընդհանուր դրույթների թերամշակության ու անբավարարության հողի վրա մեղ մոտ առաջացավ բուրժուական պետությունների ու նրանց հետախուզական որդանների դերի ու նշանակության թերագնահատություն, ինչպես նաև մեր սոցիալիստական պետության և նրա որդանների դերի ու նշանակության թերագնահատություն, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմը դրսի հարձակումից պաշտպանելու համար:

Թշնամական կապիտալիստական շրջապատման առկայությունը, յերկու աշխարհների՝ սոցիալիզմի ու կապիտալիզմի կատաղի պայքարը և առաջիկա ե'լ ապելի սուր ու կատաղի բաղկումները նրանց միջև բոլոր հարցերի կենտրոնում դնում են սոցիալիստական պետության հզորության հետաղոյ համակողմանի ամրացման խողիրը:

Սոցիալիստական պետության մասին ստալինյան ուսմունքը վերացնում է պետության վերաբերյալ մարքսիզմի ուսմունքի միքանի ընդհանուր դրույթների թեորիական անբավարարությունը: Պետության վերաբերյալ ստալինյան ուսմունքը նոր բարձրության և հասցնում սոցիալիստական պետության, նրա ուղղմական, պատժիչ ու հետախուզական որդանների ամբողջ մշխատանքը և վերջնականապես լիկվիդացիայի յէ յենթարկում կապիտալիստական պետությունների մեւնակողմի թերաղնահատումը:

Ընկեր Ստալինի այս հանճարեղ ուսմունքը զինում ե խորհրդային ժողովրդին, նրա բոլշևիկյան կուսակցության ու սոցիալիստական կառավարությանը պայքարի թեորիական հզոր զենքով հանուն Խորհրդային սոցիալիստական պետության հետաղա ամրազնիզման:

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, Էջ 542:

ԹԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Խորհրդային պետական սիստեմը պետական իշխանության կենտրոնական և տեղական որգանների միասնական կազմակերպություն է։ ԻՄ ՀՅ-ում՝ պետական իշխանությունը պատկանում է քաղաքի ու գյուղի աշխատավորներին հանձին աշխատավորների դեպուտատների Խորհուրդների։

Սա նշանակում է, վոր Խորհուրդների ամբողջ սիստեմն անխպելի մի ամբողջություն է, վորտեղ բոլոր Խորհուրդներն առանց բացառության—Գերագույն Խորհրդից մինչև գյուղական Խորհուրդը—հանդիսանում էն պետական իշխանության որգաններ, բանվոր դասակարգի դիմատուրայի որգաններ։ Պետական իշխանության որգաններն ըստ Ստալինյան Սահմանադրության բաժանվում են պետական իշխանության բարձրագույն որգանների և պետական իշխանության տեղական որգանների։ «ԻՄ ՀՅ պետական իշխանության բարձրագույն որգանը ԽՄ Գերագույն Խորհուրդն է»։ «Միութենական հանրապետության պետական իշխանության բարձրագույն որգանը Խիութենական հանրապետության պետական իշխանության ֆերագույն Խորհուրդն է»։ «Ավտոնոմ հանրապետության պետական իշխանության բարձրագույն որգանը ԱԽՍՀ Գերագույն Խորհուրդն է»։

ԻՄ ՀՅ Սահմանադրության VII դիմում, վոր կոչվում է «Պետական իշխանության տեղական որգաններ», 94-րդ հոդվածում ասված է։

«Յերկրամասերում, մարզերում, ալտոնոմ մարզերում, ոկրուգներում, շրջաններում, քաղաքներում, գյուղերում (ստանիցաներում, գյուղակներում, խուռուներում, դշլաղներում, առուներում) պետական իշխանության մարմիններն աշխատավորների դեպուտատների Խորհուրդներն են»։

Այսպիսով, աշխատավորների դեպուտատների յերկրային, մարզային, ոկրուգային, շրջանային, քաղաքային ու գյուղական Խորհուրդները հանդիսանում են պետական իշխանության տեղական որգաններ։

Իշխանության որգանների այս կազմակերպական-քաղաքական միասնության մեջ դրսեռում է Խորհրդային պետականության սկզբունքային միասնությունը։

ԻՄ ՀՅ-ում՝ ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին, ուստի և այն միասնական ու անբաժանելի յէ իր եյությամբ։ Աշխատավորները պետությունը կառավարում են իշխանության որգանների միջոցով։

Մեզանում պետական իշխանության որգաններն ընտրվում են ամենադեմոկրատական ճանապարհով։ Դեպուտատները կատարում են իրենց ընտրողների կամքը և պարբերաբար հաշիվ տալիս նրանց իրենց գործունեյության մասին։ Մյուս կողմէց իշխանության ստորադաս որգանների առջև, վորանց վորոշումները նրանք պարտավոր են կատարել։ Պետական իշխանության որգանների կառուցման այսպիսի սկզբունքը—դեմոկրատական ցենտրալիզմը—բնորոշում է իսկական ժողովրդական իշխանության եյությունը։

62/6 Այս սկզբունքի հետևողական իրագործման հիման վրա յէ վերևից մինչև ներքեւ կառուցված ամբողջ խորհրդային պետական սխմեմը։ Նա լիակատար պատառթյուն և տալիս մշակելու պետական, հասարակական ու տնտեսական կյանքի բազմազան ձևերը, նա արձակում ու խթանում է տեղական նախաձեռնությունը, բոլոր ջանքերն ուղղելով գեպի մի ընդհանուր, գլխավոր նպատակ՝ կոմունիզմի կառուցումը։

Մեզ մոտ չկա և չի կարող լինել պետական իշխանության մի որդանի հակագրումը մյուսին։ Աւրիշ բան եր ցարական Ռուսաստանում և այժմ կապիտալիստական յերկրներում, վորտեղ պետական իշխանությունը հակագրվում է տեղական ինքնավարության որգաններին։

Ինքնավարություն ասելով սովորաբար հասկանում են տեղական կառավարման այն սիստեմը, յերբ տեղական կյանքի հարցերը (գյուղոցներ, չիվանդանոցներ, բարեկարգություն և այլն) յենթակա յեն եր իսկ ընակչությունից ընտրված որգանների տնօրինությանը։

Պատմականորեն տեղական ինքնավարության դաշտափարը ծագում է երբեւ վորոշ հակակչու պետական իշխանության։ Այսպես, միջնադայրյան քաղաքներում տեղական ինքնավարության համար շարժումը դարձացել է ֆեոդալիզմի դեմ մղված պայքարում։ Ժամանակին տեղական ինքնավարության պահանջ եր առաջադրում նաև բուրժուազիան միավետական ուժիմի դեմ մղած իր պայքարում։ Իսկ յերբ բուրժուազիան, հաղթելով, ամրացալ իշխանության զեկի մոտ, հարմարեցնելով ու կատարելագործելով իր ժառանգած պետական մեքենան, գարձնելով այն կապիտալի կողմէց վարձու աշխատանքի շահագործման գործիք, ու ժամանակ ինքնավարությունը հայտարարվեց պետական կառավարում։ Իրականության մեջ սա նշանակեց բյուրոկրատական ցենտրալիզմի հաղթանակ, բուրժուազիայի ուղման-շինովների ապարատի մենազորություն, բուրժուական-զեմովոկրատական սկզբունքների կը ծույց կամ վերացում տեղական ինքնավարության բնագավառում։

Բուրժուական յերկրների տեղական կառավարումը բնորոշելու համար կանգ առնենք ֆրանսական կառավարման սիստեմի վրա:

Ֆրանսիայում դեպարտամենտի (վարչական-տերիտորիալ միավոր) դլուխ կանգնած ե պրեֆեկտը՝ կառավարական մի աստիճանավոր, վորը ներկայացնում ե մինիստրությունների և դիմումներապես ներքին գործերի մինիստրության շահերը: Նա ինքն է տնօրինում վոստիկանությունը: Դեպարտամենտներում տեղական ինքնավարության որդաններ են հանդիսանում այսպես կոչված «դիմավոր խորհուրդները», վորոնց ընտրում են 25 տարեկան դարձած, մշտապես դեպարտամենտում ապրող և նրանում ուղղակի հարկեր վճարող անձեր:

Կանայք չեն մասնակցում «դիմավոր խորհուրդների» ընտրություններին:

Ինքնավարության այս որդանի լիազորությունները շատ սահմանափակ են: Բավական ե նշել, վոր կառավարության աստիճանավոր հանդիսացող պրեֆեկտը կարող է դադարեցնել «խորհրդի» վորոշումների մեծ մասը: Բացի սրանից, «խորհրդի» վորոշումների մի մասը միայն այն ժամանակ ե անհրաժեշտ ուժ ստանում, յերբ նա հավանություն և գտնում կամ հաստատվում կառավարության կողմից:

Այնուհետև, կառավարության իրավունք ե վերապահված ցրելու «խորհրդը» մինչև նրա լիազորությունների ժամանակամիջոցի լրացումը: Յեթե սրան ավելացնենք, վոր պրեֆեկտն ինքը «դիմավոր խորհրդի» գործադիր որդանն ե, այսինքն՝ մի անձնավորություն, վորի վրա պարտականություն ե դրված կենսագործելու «խորհրդի» վորոշումները, առաջ միանգամայն պարզ կլինի «դիմավոր խորհրդի» պոտ-շատ ու աննշան դերը տեղական ինքնավարության գործերում, վորոնց փաստորն կառավարում են կառավարական աստիճանավորները:

Իսկ ինչ վերաբերում ե այսպես կոչված մոնիցիալիտետներին՝ կառավարման որդաններին համայնքներում, տպա նրանց դերն ու գործունեյության վոլորտն ավելի ևս սահմանափակ են: Մոնիցիալիտետի գործադիր որդանը մերն ե, վորոր, չնայած ընտրվում ե մոնիցիալիպար խորհրդի անդամներից, միևնույն ժամանակ կառավարական աստիճանավոր ե և իրեւ այդպիսին լիովին յենթակա յե պրեֆեկտին:

Կառավարման այսպիսի սիստեմը, պահպանելով առերևույթ ընտրական, դեմոկրատական սկզբունքը, միևնույն ժամանակ ինքնավարության որդանների գործունեյությունը կատարյալ կախման մեջ ե դնում շինովնիկական բյուրոկրատիայից ե յենթարկում նրա վերահսկողությանը:

Անդիմայում կոմունիտյուններում (վարչական-տերիտորիալ միավոր) ինքնավարության հիմնական որդանը «կոմունիտյան խորհուրդն» ե, վոր ընտրվում ե յերեք տարով: Այս որդաններում, իրեւ կանոն, դերիշում ե հողատեր աղնվականությունը, խոշոր հողատերերը: Այդ

«խորհուրդները» գտնվում են պետական զանազան աստիճանավորների, տեսուչների և այլոց անմիջական վերահսկողության տակ: Անդիմական կառավարման սիստեմը մի քիչ ձեւափոխված, նայած տեղական տարբեր պայմաններին, գործադրվում ե Ս.Մ.Ն.-ում: Յեթե դեռևս միքանի տասնամյակ առաջ անդիմական ու ամերիկյան կառավարման սիստեմներն ավելի ելին համակված գեմոկրատական սկզբունքով, քան, որինակ, Յեփրապական ցամաքում, ապա հետո արագործեն տեղի յե ունենում կառավարման ըլյուրոկրատական կենտրոնացման պրոցես, վորը կծկում ե դեմոկրատական սկզբունքը և ինքնավարության որդանն ավելի մեծ կախման մեջ դնում կառավարական չինովնիկական ապարատից:

Իտալիայում տեղական ընտրովի ինքնավարության սիստեմը փաստրեն ամբողջովին վերագիտած ե, իսկ իրենք մունիցիալիտետները դարձված են պետական մեքենայի կցորդներ:

Տնտեսապես ու քաղաքականագես հետամնաց ցարական Ռուսաստանում գործում եր կառավարման մի սիստեմ, վորը կառուցված եր տեղական ինքնավարության սկզբունքները վարչական ցենտրալիցավելիյի հետ միացնելու վրա, այսինքն՝ այնպիսի մի սիստեմ, վորը թույլատրում եր ինքնավարության վորոշ սկզբունքներ ունենոր դասակարգերի համար՝ ցարական չինովնիկների արթուն հսկողության տակ:

Ինչպես հայտնի յե, ցարիզմի ժամանակ նահանգի գլուխ կանգնած եր նահանգապետը, ցարական սատրապը, վորն ըստ եյության լիակատար տեր եր իր նահանգի բոլոր գործերում: Այստեղ, վորտեղ միքանի նահանգներ միացած ելին վարչական կառավարման ոծովի, դրանց գլուխ կանգնած եր ցարի կողմից ուղղակի նշանակված գեներալ-նահանգապետը: Նահանգապետը, նրան կից գործող «նահանգապական վարչությունը» և նրա իշխանությանը յենթակա նահանգապական հիմնարկները, զանազան ատյաններին ու գրասենյակները՝ ըերներերան լցված զանազան առողջապահության ու կոչման ցարական չինովնիկներով, կազմուած ելին կարգի ու տեղական կառավարման հիմքը:

Որու հետ միասին գործում ելին տեղական ինքնավարության որդանները, նահանգապական և գավառական զեմստվուները, ինչպես նաև քաղաքային ինքնավարության որդանները: Ինքնավարության այս որդաններն զբաղվում ելին տեղական կյանքի զանազան գործերով, ժողովը գավառական կրթության, առողջապահության հարցերով, հանարարությամբ, բարեկարգման հարցերով և այլն: Այս նպատակներով ինքնավարության որդաններն իրավունք ունելիքն վարչություններ հանելու, հարկեր նշանակելու և զանաւուներ կատարելու:

Եթեք տարով ընտրվող դեմուսավոյի ընտրությունները կատարվում ելին ընտրապական կուրիաներով, այսինքն՝ ընտրությունների ուսակցիոն

սիստեմով ըստ դասային ու դասակարգային խմբերի, վորն ուներ աշխատավորների ընտրական իրավունքների հատուկ սահմանափակումներ :

Հատ կուրիաների ընտրությունները զեմստվուներում ապահովում էին ազնվական-կարգածատերերի ու կուրակների ճնշումը :

Իսկ ինչ մերաբերում և քաղաքային ինքնավարության մինչեղափոխական որդաններին, վորոնք կազմված եին քաղաքային դումայից, ապա վերջինս ընտրություններին մասնակցում եին միայն արդյունաբերողները, առեւտրականներն ու տնտերերերը: Բավական են նշել, վոր ամբողջ քաղաքային բնակչության համարյա 99%-ը հեռացված եին այդպիսի քաղաքային դումաների ընտրություններից, վորտեղ նիստեր ունենում խոշոր բուրժուազիայի վերնախավը:

Բայց ինքնավարության այս սիստեմն ել գտնվում էր ինքնակալության չինովնիկական-վոստիկանական խիստ հսկողության տակ: Զեմստվային և քաղաքային ինքնավարությունների գործադիր որդանները (զեմստվային վարչություն և քաղաքային վարչություն) հաստատվում եին ներքին գործերի մինիստրության, կամ նահանգապետի կողմից: Յունանդապետը լայն իրավունքներ ուներ փոխելու ինքնավարության գեմստվային ու քաղաքային որդանների վորոշումները, չփոփոք արդեն այն մասին, վոր այդ վորոշումների մի մասը յենթակա յեր կասավարական հաստատման:

Այս և ցարական Ռուսաստանի ինքնավարության որդանների պատկերը: Մոտավորապես նույն ձեռով նրանք պահպանվեցին մինչև 1917 թվի փետրվարյան բուրժուական-գեմստվարական հեղափոխությունը:

Կապիտալիստ-մինիստրների ժամանակավոր կառավարության ունակցիոն քաղաքականությունն ըստ եյության նպատակ ուներ, սահմանափակելով վորոշ աննշան փոփոխություններով, հիմնականում պահպանել ինքնավարության հին սիստեմը:

Սրա հետ միասին ժամանակավոր կառավարությունը համարյալիվ չափով պահպանեց տեղական ինքնավարության ցարական բյուրոկրատական առարկան ի գեմս նահանգական ու քավառական հիմնարկների, պահմանափակվելով նրանով, վոր նահանգապետների փոխարքն նստեցրեց բուրժուազիայի դրած «ժամանակավոր կառավարության կոմիտարներին»:

Այդ բացահայտ ռեակցիօն քաղաքականություն եր, ուղղված ընդդեմ հեղափոխական պրոլետարիատի շահերի, ընդդեմ աշխատավորների, վորոնք հեղափոխության առաջին որերից սկսեցին դնել պրոլետարական պետականության հիմքերը-բանվորների, զյուղացիների ու գինուրների դեպուտատաների Խորհուրդները:

Ժամանակավոր կառավարության այս ռեակցիոն քաղաքականու-

թյունն արտացոլում էր շահագործող դասակարգերի շահերը: Կապիտալիստականներն ու կալիմածատերերը շահագրղոված եյին նրահպաններու ցարիզմից ժառանգած ռազմա-բյուրոկրատական պետական մեքենան, մասնավորապես, նրա տեղական կառավարման մեխանիզմը, վորպեսի դրանք հարմարեցնի իր դասակարգային շահերին, նպատակ ունենալով հաշվեհարդար կատարել հեղափոխական մասնավորների հետ և ամրացնել իր քաղաքական ու տնտեսական զերիչիսանությունը: Միայն պրոլետարիատն է ամեն տեսակ շահագրղործման հիմքերը խորտակելու համար մղած իր պայքարում շահագրղոված, վոր խորտակվի, ջարդվի շահագործող դասակարգերի պետական մեքենան և ստեղծվի պետական իշխանության իր նոր արքարարությունը: Հեղափոխական պրոլետարիատը 1917 թվի հոկտեմբերին հենց այդպես ել վարմեց շահագործողների պետական կեղեքիչ մեքենայի հետ. ջարդեց ու խորտակեց բուրժուազիայի պետական իշխանության արդարադար, իսկ նրա հետ միասին վերջ դրեց նաև նրա տեղական պետական կառավարման սիստեմին:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը պրոլետարիատին դարձրեց գերիշխող դասակարգ, իսկ բանվորների, դյուղացիների և զինվորների դեպուտատների Խորհուրդները՝ պրոլետարիատի դիկտատորայի որդանները: Սկսվեց մի նոր դարադրության պատմության մեջ՝ բանվորների և դյուղացիների սոցիալիստական պետության դարաշրջանը:

ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրության, միութենական ու ավտոնման հանրապետությունների սահմանադրությունների համապատասխան Խորհրդային Միության մեջ պետական իշխանության տեղական որդաններն իրենց տերիտորիայի վրա ղեկավարում են կուլտուր-քաղաքական ու տնտեսական շինարարությունը, սահմանում են տեղական բյուջեն, ղեկավարում են իրենց յենթակա կառավարման որդանների գործունեյությունը, ապահովում են պետական կարգապահությունը, աջակցում են յերկրի պաշտպանումնակությանը, ինչպես նաև ապահովում են որենքների վրա հսկելն ու քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Տեղական խորհուրդներն անմիջականորեն կազմված են մասնաների հետ, նրանց գործունեյությունն ուղղված է ղեկավարման կողմների ամենորյա, հարածուն կարիքների ու պահպանների բավարարությը:

Համեմատական կառավարում ընդունված յերրորդ հնդամյա պլանի համապատասխան տեղական Խորհրդային համական աշխատանք պետք է կատարեն ժողովրդական տնտեսության բոլոր ասպա-

բեկներում։ Այս հնդամյակում պետք է իրագործվի ընդհանուր միջնակարգ կրթությունը քաղաքում, պետք է ավարտվի ընդհանուր յոթնամյա միջնակարգ կրթությունը դյուլում և բոլոր ազգային հանրապետություններում՝ ընդարձակելով յերեխանների ընդգրկումը տասնամյա ուսուցմամբ։ Այս կարելուագույն կուլտուրական աշխատանքը քաղաքներում ու բանվորական ավաններում տարրական ու միջնակարգ գործոցների աշակերտության քանակը 8,6 միլիոնից կավելացնի կհասցնի 12,4 միլիոնի, իսկ գյուղական վայրերում՝ 20,8 միլիոնից մինչև 27,7 միլիոնի։ Այս խնդրի կատարումը հսկայական ուշագրիռություն կապահանջի Խորհուրդներից։ Այս նույն հնդամյակում խոշոր չափով կամելանա կինոթատրոնների, ակումբների, զբաղարանների, կուլտուրայի տների ու ընթերցարանների ցանցը, լայնորեն կկազմակերպվեն ու վեց անդամ կմեծանան ստացիոնար և շրջիկ հնչուն կինոսարքակուրումները։

Մեծ են պետական իշխանության տեղական որդանների առջև դըմ-
կած խնդիրները նաև առողջապահության բնագաղատում։ Յերրորդ
Հնդկամյա պլանով նախատեսված ե բարվականացափ ուժեղացնել աշ-
խատավլորների առողջապահության, հիվանդանոցային ողնության բա-
րելավման, սանկտարական-պրոֆիլակտիկ միջոցառումների ընդար-
ձակման, ծննդկաններին ծննդաբերության ժամանակ ողնություն ցույց
ուղղու և մանկական հիվանդանոցներն ընդարձակելու, աշխատանքի
կաշտավանությունը բարձրացնելու և բանվորների հանդիսան ու ֆիզ-
կուլտուրան կազմակերպելու աշխատանքները։ Առողջապահության վրա
պետության կատարած ծախսերը 1937 թվի 10,3 միլիարդ ռուբլուց
1942 թվին կհասնեն 16,5 միլիարդ ռուբլու։ Մշտական մառլներում
ու մանկապարտեզներում տեղերի թիվը 1942 թվին կհասնի 4,2 միլիո-
նի 1937 թվի 1,8 միլիոնի զիմաց։

Տեղական Խորհուրդներն, իրեւ պետական իշխանության որդաներ, պետք ե պայքարնեն պողիալիստական գյուղատնտեսության ու անասնապահության զարգացման համար: Գյուղատնտեսության զարգացման ապագարեղում անհրաժեշտ ե յերրորդ հնդամյա պլանի վերջում ապահովել 8 միլիարդ փութ հաշահատիկի հավաքումը՝ մի հեկտարից 13 տեսաներ միջին բերքատվությամբ: Պակաս կարելորություն չունենայն խնդիրները, վոր դրված են յերրորդ հնդամյա պլանով տեխնիկական կուլտուրաների զարգացման և սոցիալիստական անասնապահության զարգացման գծով: Խորհուրդների աշխատանքում մեծ տեղ պիտի գրավեն այնպիսի հարցեր, ինչպես են կարտոֆիլի-բանջարեղենի և անասնապահական բաղաների ստեղծումը մեծ քաղաքների և արդյունաբերական կենտրոնների շուրջը:

«Մոսկվայի, Լենինգրադի, Բազմի, Խարկովի. Կեկվի հնչուելու

Դոնբասի, Կուլյասի, Գորկու արդյունաբերական կենտրոնների, Հեռավոր Արևելքի քաղաքների և մյուս բոլոր խոչոր քաղաքների շուրջն ստեղծել կարտոֆիլա-բանջարութական ու անասնապահական բազաներ, վորոնք լիովին ապահովեն բանջարեղենի, կարտոֆիլի և չափ չափով կաթի ու մսի մատակարարումն այդ կենտրոններին»¹:

Այս խնդրի իրագործման մեջ վճռական դեր է ընկնում աշխատավորների դեպուտատների ըջանային Խորհուրդներին:

Ընտրական կանոնադրության համաձայն ժողովրդական դատարանին գանդատվել կարող են ինչպես այն քաղաքացիները, վորոնք դըտնում են, վոր աշխատավորների դեպուտատների Խորհուրդն անշտություն և թույլ տվել ընտրողների ցուցակը կազմելիս, այնպես և այն քաղաքացիները, վորոնք գտնում են, վոր ընտրողների ցուցակի մեջ սխալ և մտցված այս կամ այն անձը, վորն ընտրական իրավունք չունի, կամ չի մտցված այն անձը, վորն ընտրական իրավունք ունի։

Ժողովրդական դատարանը յուրաքանչյուր գանդատ պետք է քննի

վոչ ուշ, քան յերեք որում, հաշված նաև դանդատը ներկայացնելու որը։ Ինչպես արդեն ասվեց վերեւում, ընտրողների ցուցակներում անձառնություններ լինելու վերաբերյալ դիմումները դատարանը քննում է դիմունի և Խորհրդի ներկայացնելու համար։

Յուրաքանչյուր գանդատի վերաբերյալ ժողովրդական դատարանի վորոշումը պետք է հայտարարվի նույն դատարան նիստում։ Այս դեպքում գանդատի վերաբերյալ ժողովրդական դատարանի վորոշումը վերջնական և ուժի մեջ և մտնում նրա կայացման մոմենտից։

Ժողովրդական դատարանը գանդատը քննելուց հետո դատարանը վորոշումը պատճեն է իր վորոշման պատճենը և միաժամանակ այս վորոշման պատճենն ուղարկում է աշխատավորների դեպուտատների Խորհրդին։

Ընտրողների ցուցակում ուղղումները կատարվում են դատարանի վորոշման համապատասխան։

Այսպիսով, ընտրական կանոնադրությամբ հաստատված ընտրողների ցուցակներ կազմելու կարգը ընտրողների համար յերաշխավորում է նրանց ընտրական իրավունքների կատարյալ անձնունմխելիությունը։

Վոչ մի նման բան չկա և չի կարող լինել վորեւ կապիտալիստական յերկրում։

Բոլոր բուրժուական յերկրներում ընտրողների ցուցակներ կազմելու կապված և ամենաբազմատեսակ խորամանկությունների ու մեքենայությունների հետ, վորոնք նախատակ ունեն սահմանափակել աշխատավորների մասնակցությունն ընտրություններին։

Վորոշ բուրժուական յերկրներում ունենոր դասակարգերից յելած ընտրուներն ունեն վոչ թե մի, այլ միքանի ընտրական ձայն և մըտցալում են ընտրողների միքանի ցուցակի մեջ։ Անգլիայում արգյունաբերական և առևտրական ձեռնարկությունների տերերը, ինչպես նաև նրանց կամայք, իրավունք ունեն յերկու անդամ ձայն տալու տարրեր ընտրական ոկրուգներում։ մի անդամ ըստ բնակության վայրի, յերկրության անդամ՝ ըստ նրանց ձեռնարկության գոնված վայրի։ Բարձրագույն կրթություն ունեցող անձերը բացուցիչ ընտրական ձայնի իրավունք ունեն այն համալսարանական ընտրական ոկրուգում, վորոնք նրանք սովորել են։

Կապիտալիստական յերկրներում կատարվում են աշխատավորների ընտրական իրավունքների բազմաթիվ սահմանափակումներ։ Բավական և թվարկել բուրժուական յերկրների ընտրական որենքների պահանջները, վորպեսզի համոզվենք, վոր կապիտալիստական կարգերում ընտրությունների ընդհանուր լինելը կեղծիք է։ Անգլիայում աշխատավորը ընտրուների ցուցակի մեջ և մտցվում և թույլատրվում են նրան մասնակցել ընտրություններին միայն այն պայմանով, վոր նա վեց ամիս աղրելիս լինի տվյալ վայրում և վորոշակի հարկեր վճարող։ Մինչեւ այժմ տեղական ինքնակարության որդաններն ընտրելու ժամանակ

որենքը պահանջում է, վոր ընտրողը առանձին բնակարան ունենա կամ, գոնե, առանձին սենյակ։ Պարզ է, վոր որենքի այս կետն իր սուր ծայրով ուղղված է բնակչության չունեոր խալերի դեմ։ Բոլոր անկյուն վարձողները, տնային ծառայողներն ու առհասարակ նրանք, ովքեր ապրում են ուրիշ տարածության վրա, ինքնարերաբար զրկվում են ընտրական իրավունքից։

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ամեն մի նահանգ սահմանում է իր ընտրական որենքը։ Շատ նահանգներում ընտրողը պարտավոր է փող մտցնել ընտրողների ցուցակը կազմելու ծախսերի համար, այլապես նա ցուցակի մեջ չի մտցվի։

ԸՆՏՐԱԿԱՆ ՈԿՐՈՒԴՆԵՐ

Խորհուրդների ընտրության ընդհանուր սիստեմի մեջ ընտրական ոկրուգները գրավում են կենտրոնական տեղերից մեկը, վորովհետեւ Խորհուրդների ընտրությունները կատարվում են ըստ ընտրական ոկրուգների։ Աշխատավորների գեպուտատների ամեն մի Խորհուրդը ընտրելու համար անհրաժեշտ է ամենից առաջ կազմել ընտրական ոկրուգներ։ Բնարական կանոնադրության համաձայն յուրաքանչյուր ընտրական ոկրուգ աշխատավորների գեպուտատների համապատասխան Խորհուրդը և ուղարկում մի դեպուտատ։ Սա նշանակում է, վոր Խորհուրդի տերիսորիայում վորքան ընտրական ոկրուգ կազմվի, այնքան ել դեպուտատ պիտի ընտրվի տվյալ Խորհրդի մեջ։ Կանոնադրությունը հաստատել և աշխատավորների գեպուտատների յուրաքանչյուր Խորհրդի ընտրության համար ընտրական ոկրուգներ կազմելու պարզ ու փորչ կարգ։ Բնարական ոկրուգներ են կազմում այն Խորհուրդները, վորոնց համար ընտրություններ են կատարվում։ Այսպես, որինակ, աշխատավորների գեպուտատների յերկրային, մարզային Խորհուրդների ընտրական ոկրուգները կազմվում են աշխատավորների գեպուտատների համապատասխանորեն յերկրային, մարզային Խորհրդի կողմից։ Շըրջանային Խորհուրդների ընտրական ոկրուգները կազմվում են աշխատավորների գեպուտատների համապատասխանորեն յերկրային, մարզային Խորհրդի կողմից։ Շըրջանային Խորհուրդների ընտրական ոկրուգները կազմվում են քաղաքային Խորհրդի կողմից։ Գյուղական և ավանային Խորհուրդների ընտրական ոկրուգները՝ աշխատավորների գեպուտատների գյուղական և համապատասխանորեն ավանային Խորհուրդների կողմից։ Բնարական ոկրուգների ցուցակները, Հրապարակում են ընտրական ոկրուգներ կազմած աշխատավորների գեպուտատների Խորհուրդների գործադիր կոմիտեները վոչ ուշ, քան ընտրություններից 55 որ առաջ։ Աշխատավորների գեպուտատների յուրաքանչյուր Խորհրդի, սկսած գյուղականից և վերջացրած մարզայինով, ինքնուրույն կերպով կազմում են

ընտրական ոկրուգներ այն կարգով, վոր նախատեսված է ընտրական կանոնադրության հատուկ գլխում։

Ակնառու գարձնելու համար քննենք ԱԽՖՍՀ աշխատավորների գեպուտատների Խորհուրդների ընտրական ոկրուգներ կազմելու սխառեցը կոնկրետ որինակներով։

Կանոնադրության III գլխի հոդված 26-ում շարադրված է աշխատավորների գեպուտատների յուրաքանչյուր յերկրային և մարզային Խորհրդի ընտրական ոկրուգներ կազմելու կարգը։ Նայած յերկրի մեծության, բնակչության վոչ պակաս, քան 10 հազար, և վոչ ավելի, քան 30 հազար հոգուն կազմվում է յերկրային խորհրդի մի ընտրական ոկրուգ։ Այս նորմաների համաձայն կրասնդարի յերկրային Խորհրդի ընտրության համար ընակչության յուրաքանչյուր 30 հազար հոգուն կազմվում է մի ընտրական ոկրուգ, Որջոնիկիձեյի յերկրային Խորհրդի գին՝ յուրաքանչյուր 20 հազար հոգուն, իսկ Պրիմորյեյի Խորհրդին՝ 10 հազար հոգուն։ Զարց և ծաղում, թե հիշատակված յերկրներից յուրաքանչյուրում վո՛րքան ընտրական ոկրուգ պիտի կազմվի։ Մոտավոր հաշիվները ցուցում են տալիս, վոր յիշելով նշված նորմաներից և բնակչության ընդհանուր քանակից, կրասնդարի յերկրում պիտի կազմվի 106 ընտրական ոկրուգ ($\frac{3173 \text{ հազ.}}{30 \text{ հազ.}} = 106$), Որջոնիկիձեյի յերկ-

րում՝ 97 ($\frac{1949 \text{ հազ.}}{20 \text{ հազ.}} = 97$), իսկ Պրիմորյեյի յերկրում 90 ($\frac{907 \text{ հազ.}}{10 \text{ հազ.}} = 90$) ։

= 91) ընտրական ոկրուգ։ Բնարական ոկրուգներ կազմելու նույն կարգը սահմանված է նաև աշխատավորների գեպուտատների մարզային Խորհուրդների ընտրությունների վերաբերյալ։ Որինակ, Մոսկվայի մարզային Խորհուրդն ընտրելիս բնակչության յուրաքանչյուր 60 հազար հոգուն կազմվում է մի ընտրական ոկրուգ, Լենինգրադի մարզային Խորհուրդը՝ յուրաքանչյուր 45 հազար հոգուն, Վոլգոգրադի մարզային Խորհուրդը՝ յուրաքանչյուր 20 հազար, Մուրմանսկի մարզային Խորհուրդը՝ 5 հազար հոգուն և այլն։ Յուրաքանչյուր մարզի տրված է բնակչության կոնկրետ նորմա, վորի հիման վրա և կազմվում է ամեն մի ընտրական ոկրուգ։ Այս նորմաներով Մոսկվայի մարզային Խորհուրդն ընտրելու համար կազմվելու յի մինչև 150 ընտրական ոկրուգ, հետեւաբար, նույնքան ել դեպուտատ։ Լենինգրադի մարզային Խորհրդի ընտրություններին կազմվելու յի մինչև 145 ընտրական ոկրուգ, հետեւաբար նույնքան ել դեպուտատ և ընտրվելու և այլն։ Կոնկրետ կերպով այդ աշխատանքը կատարվում է այսպես մարդաշամարի ավանային կարգության վրա պարզում են, թե վորքան ազգաբնակություն կա յերկրում, և սրանից հետո այս բնակչության ընդհանուր քանակը բաժանում ըստ նորմայի մեկ ընտրական ոկրուգ կազմով ընակչության թվին։ Ի վերջո ստացվում է յուրաքանչյուր Խորհրդի տերիսո-

բեայում կաղմվող ընտրական ոկրուղների ընդհանուր քանակը։ Քանի վոր յերկրային և մարզային Խորհուրդների ընտրական ոկրուգներին ընկնող բնակչության նորմաները տատանվում են 5-ից մինչև 60 հազարի միջև, ցանկալի յեւ հասնել այն բանին, վոր ընտրական ոկրուղները հնարավորության սահմաններում կազմվեն ամբողջական վարչական շրջաններից կամ մի խոչըր ուայոնում կազմվեն միքանի ընտրական ոկրուգներ, խոտրեն հետեւը ընտրական կանոնադրությամբ հաստատված ընտրական նորմաներին։

Այս ընտրական կամպանիայում, սկզբնական հաշիվներով, աշխատավորների դեպուտատաների յերկրային, մարզային խորհուրդներ ընտրելիս պետք եւ կազմվեն ավելի քան 7500 ընտրական ոկրուգ, այսինքն ավելի շատ, քան միութենական և ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների ընտրություններին։

Ընտրական կանոնադրության IV գլխում ընտրական ոկրուգներ կազմելու համանման կարգ և սահմանված ազգային և վարչական ոկրուգների աշխատավորների դեպուտատաների ոկրուգային Խորհուրդներն ընտրելիս։ Ոկրուգային Խորհուրդների ընտրության մեկ ընտրական ոկրուգի բնակչության նորման սահմանված և վոչ պակաս, քան 300 և վոչ ավելի, քան 10 հազար հոգի։ Սա նշանակում է, վոր յուրաքանչյուր ազգային և վարչական ոկրուգում կազմվելու յեւ վոչ պակաս, քան 25 և վոչ ավելի, քան 70 ընտրական ոկրուգ, հետեւարար, յուրաքանչյուր ոկրուգային Խորհրդի մեջ պիտի ընտրվեն նույնքան եւ դեպուտատաներ։

Ընտրական կանոնադրությամբ հաստատված աշխատավորների դեպուտատաների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային ընտրական ոկրուգներ կազմելու կարգն ունի իր առանձնահատկությունները։ Այսպէս, որինակ, ՌիֆֆՍՀ տեղական Խորհուրդների ընտրական կանոնադրության Վ գլխի հոդված 42-ի համաձայն, 25 հազարից ավելի բնակչություն ունեցող շրջանում բնակչության յուրաքանչյուր հազար հոգուն կազմվում է մեկ ընտրական ոկրուգ, սակայն շրջանում պետք եւ լինի վոչ ավելի, քան 60 ոկրուգ։

Մինչև 25 հազար բնակչություն ունեցող շրջանում կազմվում և 25 ընտրական ոկրուգ։

Սա նշանակում է, վոր 25 հազարից մինչև 60 հազար ազգաքանակություն ունեցող շրջաններում ընտրական ոկրուգը կազմվում է յուրաքանչյուր հազար մարդուն, իսկ այսպիսի շրջանները ԽՍՀՄ-ում 60%-ից ավելի յեն։ Այս կանոնի համաձայն 30 հազար ազգաքանակություն ունեցող շրջանում կազմվում է 30 ընտրական ոկրուգ։ Յեթե շրջանում 60 հազար ազգաքանակություն կա, ապա այդպիսի շրջանում կազմվում է 60 ընտրական ոկրուգ, այսինքն՝ ամեն մի հազար մարդուն կազմվում է մեկ ընտրական ոկրուգ։ Մեւ շրջանում 60-ից ավելի ընտ-

րական ոկրուգ չի կազմվում։ Այս պատճառով 60 հազարից ավելի ընակչություն ունեցող շրջանները պետք եւ բաժանվեն վոչ ավելի, քան 60 հավասար ընտրական ոկրուգի։ Որինակ, յեթե շրջանը 84 հազար ազգաքանակություն ունի, ապա այնտեղ մի ընտրական ոկրուգը կազմվում եւ վոչ թե յուրաքանչյուր հազար մարդուն, այլ ամբողջ շրջանը բաժանվում է բնակչության թվով հավասար 60 ընտրական ոկրուգի։ Սպակալ յեպքում յուրաքանչյուր 1400 հոգուն կընկնի մի ընտրական ոկրուգ։

Մինչև 25 հազար բնակչություն ունեցող շրջաններում կազմվում եւ 25 ընտրական ոկրուգ, այսինքն՝ 25 հազարից պակաս բնակչություն ունեցող յուրաքանչյուր շրջան նույնպես պետք եւ բաժանված լինի 25 հավասար ընտրական ոկրուգի։ Այսպէս, որինակ, յեթե շրջանում 15 հազար բնակչություն կա, ապա դա բաժանելով 25 ընտրական ոկրուգի, մենք կստանանք յուրաքանչյուր 600 մարդուն մի ընտրական ոկրուգ։

ԽՍՀՄ-ում կա ընդամենը 3552 շրջան, իսկ շրջանային խորհուրդների ընտրության համար կկազմվի մինչև 135 հազար ընտրական ոկրուգ։

Ընտրական ոկրուգներ կազմելու նույնպիսի կարգ և հաստատված նաև աշխատավորների դեպուտատների քաղաքային և ավանային Խորհուրդների ընտրության համար։ ՌիֆֆՍՀ-ում 12 հազարից մինչև 100 հազար բնակչություն քաղաքաներում յուրաքանչյուր 350 մարդուն կազմվում է մի ընտրական ոկրուգ, իսկ մինչև 12 հազար բնակչություն ունեցող քաղաքաներում կազմվում է 35 ընտրական ոկրուգ։ Այսպիսով, մինչև 12 հազար բնակչություն ունեցող բոլոր քաղաքները կազմում են 35-ական հավասար ընտրական ոկրուգ։ Այսպէս, որինակ, յեթե քաղաքն ունի 10·500 բնակիչ, ապա դրանք 35 հավասար ընտրական ոկրուգների բաժանելիս յուրաքանչյուր 300 մարդուն կընկնի 1 ոկրուգ և այդ 300 ընտրողները մի դեպուտատ կուղարկեն աշխատավորների գեպօւտատների քաղաքային Խորհրդի 100 հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքների համար ՌիֆֆՍՀ և մյուս միութենական հանրապետությունների աշխատավորների գեպօւտատների Խորհրդների կանոնադրությամբ։ Որինակ, Բառնաուլ, Զերժինսկ, Կեմերովո, Կիրով, Կոստրոմա, Կուրսկ, Մակնիսովորսկ, Սուլժանսկ, Որյոլ, Պրկոպյեվսկ, Ռիբինսկ, Տամբով, Տոմսկ, Ալյանովսկ, Չիտա քաղաքներում բնակչության յուրաքանչյուր 400 մարդուն համար կազմվում է մի ընտրական ոկրուգ, իսկ Վլադիվոստոկ, Խրկուտսկ, Կալինին, Կրասնոդար, Խաբարովսկ քաղաքներում յուրաքանչյուր 600 բնակչության կազմվում է մի ընտրական ոկրուգ և այլն։ Քաղաքային այն ուայոններում, վորտեղ 20 հազարից ավելի բնա-

կիչ կա, յուրաքանչյուր 500 հոգուն կազմվում ե մի ընտրական ոկրուդ: Սակայն յուրաքանչյուր ուայոնում կազմվում ե վոչ ավելի, քան 250 ընտրական ոկրուդ:

50 հազար բնակչություն ունեցող քաղաքային ուայոնում կազմվում ե 100 ընտրական ոկրուդ, իսկ 100 հազար բնակչությամբ քաղաքաներում՝ 200 ընտրական ոկրուդ: 125 հազար բնակչություն ունեցող քաղաքային ուայոնում կազմվում ե 250 ընտրական ոկրուդ: Այսպես, որինակ, 200 հազար բնակչություն ունեցող ուայոնում կարող ե կազմվել ավելի քան 250 ոկրուդ. այս գեղգում յուրաքանչյուր ընտրական ոկրուդ կունենա 800 բնակչի նորմա:

Մինչև 20 հազար բնակչություն ունեցող քաղաքային ուայոններում կազմվում ե 35-ական ընտրական ոկրուդ: Որինակ, յեթե ուայոնում 14 հազար բնակիչ կա, ապա բնակչության յուրաքանչյուր 400 հոգուն կազմվի այդ ուայոնական Խորհրդի մեկ ընտրական ոկրուդ:

Ընդամենը ԽՍՀՄ-ում կա 931 քաղաք և 367 քաղաքային ուայոն: Այդ Խորհուրդների ընտրության համար անհրաժեշտ կլինի կազմել ավելի քան 160 հազար ընտրական ոկրուդ, և յուրաքանչյուր քաղաքային և ուայոնական Խորհրդի ընտրական ոկրուդ կուղարկի մի գեղուտատ:

Աշխատավորների գեղուտատաների գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունները նույնպես կատարվում են ըստ ընտրական ոկրուդների այն նորմաներով, վոր սահմանված են ՌԽՖՍՀ տեղային Խորհուրդների ընտրական Կանոնադրության VII գլուխում: Գյուղական և ավանային Խորհուրդների ընտրական ոկրուդները կազմվում են այն նույն հիմունքներով, ինչ և աշխատավորների գեղուտատաների բարձրադաս Խորհուրդների ընտրական ոկրուդները: Հազար հոգուց ավելի բնակչություն ունեցող գյուղական և ավանային Խորհրդի տեղիտորիայում յուրաքանչյուր 100 մարդուն կազմվում ե մի ընտրական ոկրուդ, սակայն վոչ ավելի, քան 25 ընտրական ոկրուդ:

Մինչև հազար բնակիչ ունեցող գյուղխորհուրդներում ու ավաններում կազմվում ե 9 ընտրական ոկրուդ: Սա նշանակում է, վոր հազարից մինչև 2500 բնակչություն ունեցող գյուղերում ու ավաններում յուրաքանչյուր 100 մարդուն կազմվում ե մի ընտրական ոկրուդ, այսինքն՝ յուրաքանչյուր 100 մարդուց ընտրուդները գյուղական կամ ավանային Խորհուրդ կուղարկեն մի գեղուտատ, վորչափով վոր գյուղական և համապատասխանորեն ավանային Խորհրդի յուրաքանչյուր ընտրական ոկրուդ Խորհուրդ ե ուղարկում մի գեղուտատ: 2500 հոգուց ավելի բնակիչ ունեցող գյուղխորհուրդներում ու ավաններում կազմվում ե վոչ ավելի, քան 25 հավասար ընտրական ոկրուդ: Տվյալ գեղութերում գյուղական և ավանային Խորհրդի տեղիտորիան բաժանվում ե 25 հավասար ընտրական ոկրուդի: Այսպես, որինակ, յեթե գյուղխոր-

հուդի տեղիտորիայում ապրում ե 3750 մարդ, ապա այստեղ կազմվում ե 25 ընտրական ոկրուդ յուրաքանչյուրում 150 մարդ նորմայով: Իսկ յեթե գյուղխորհրդի տեղիտորիայում ապրում ե 540 մարդ, ապա այսպիսի Խորհրդի տեղիտորիայում կազմվում ե 9 ընտրական ոկրուդ յուրաքանչյուրում 60 մարդ նորմայով:

Ընդամենը ԽՍՀՄ-ում կա 64-277 գյուղական և ավանային Խորհրդներ: Գյուղական և ավանային Խորհուրդների ընտրությունները կատարելու վերաբերյալ ընտրական Կանոնադրության համաձայն ընդամենը անհրաժեշտ ե կազմել ավելի քան 1 միլիոն ընտրական ոկրուդ, չետեաբար և, ընտրել նույնքան գեղուտատաներ:

Աշխատավորների գեղուտատաների տեղական Խորհուրդների ընտրության վերաբերյալ Կանոնադրության համաձայն Խորհուրդների համար ընտրական ոկրուդների առավելագույն քանակն ստացվում ե հետեւյալը: յերկրներում (մարզերում)՝ 50—150, ոկրուդներում (վարչական և ազգային)՝ 25—70, շրջաններում՝ 25—60, քաղաքներում՝ վոչ պակաս, քան 35 և ավելի, նայած քաղաքի մեծությանը, ուայոններում՝ վոչ պակաս, քան 25 և վոչ ավելի, քան 250, գյուղխորհուրդներում ու ավաններում՝ 9-ից մինչև 25:

Ուայոնական, քաղաքային և գյուղական Խորհրդների ընտրական ոկրուդներ կազմելիս անհրաժեշտ ե խստորեն առաջնորդվել ընտրական Կանոնադրությամբ: Այս գեղութամբ ցանկալի յէ, վոր գյուղական Խորհրդի տեղիտորիան քամահաճորեն չբաժանվի շրջանային Խորհրդի միջների ընտրական ոկրուդների միջև: Յուրաքանչյուր Խորհրդի ընտրական ոկրուդներ կազմվում են տեղիտորիայի համար կանոնադրության մեջ աշխատավորների գեղուտատաների յուրաքանչյուր Խորհրդի համար:

Ընտրական ոկրուդներ կազմելու վերաբերյալ մեջ բերված սկզբանքը լիովին համապատասխանում ե ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրությանը: Աշխատավորների գեղուտատաների համապատասխան Խորհրդի յուրաքանչյուր ընտրական ոկրուդ համար կանոնադրության մեջ աշխատավորների գեղուտատաների յուրաքանչյուր Խորհրդ ուղարկվում ե մեկական գեղուտատ:

Յուրաքանչյուր աշխատավոր պետք ե իմանա, վոր տեղական Խորհրդների գեղուտատաների ընտրությունները կատարվում են ընտրական ոկրուդներով: Սրա համար ամեն մի Խորհրդի տեղիտորիա պետք է բաժանվի աշխատավորների գեղուտատաների միենույն Խորհրդի ընտրության միմյանց հավասար ընտրական ոկրուդների: Տեղական Խորհրդների ընտրություններն ըստ ընտրական ոկրուդների կատարելը հակայական քաղաքական նշանակություն ունի: Ամեն մի գեղուտատատեղատորեն կապված է իր ընտրական ոկրուդի հետ, իր ընտրուդների հետ, նրանց առջև պատասխանատվություն ե կրում Խորհրդում կա-

տարած իր աշխատանքի համար։ Ընտրողներն իրենց հերթին վերահսկում են իրենց դեպուտատի աշխատանքին;

ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐ

Հնարական տեղամասերն ստեղծվում են ընտրողներից ընտրական բյուլետեններն ընդունելու և այն ձայները հաշվելու համար, վոր տըր-վել են տեղամասում ըստ յուրաքանչյուր ընտրական ոկրուգի այս կամ այն կորհուրդն ընտրելիս։ Ընտրական տեղամասերը կազմվում են մի-այն տերիտորիալ հատկանիշով, այսինքն՝ ըստ ընտրողների բնակու-թյան վայրի։ Ըստ արտադրական հատկանիշի, այսինքն՝ ըստ ֆաբրի-կանների ու գործարանների ընտրական տեղամասեր կազմել չի թույլա-տըրվում։ Ուժամբ տեղական կորհուրդների ընտրական կանոնադրու-թյան հոդված 66-ում նշվում է.

«Ծնարական բյուլետեններն ընդունվելու և ձայները հաշվելու համար քաղաքների, ավանների ու գյուղապետությունների տերիտորիան բաժանվում է ընտրական տեղամասների, վորոնք ընդհանուր են աշխատավորների գեղութաների յերկրային և մարզային Խորհուրդների, ավտոնոմ մարզերի, ազգային և վարչական ռեզուլտների աշխատավորների դեպուտատների Խորհուրդների, աշխատավորների դեպուտատների ըրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային Խորհուրդների բնարության համար»:

Այսպիսով, տեղական Խորհուրդների ընտրության ընդհանուր սիս-
տեմի մեջ ընտրական տեղամասերը գրավում են կենտրոնական տեղե-
րից մեկը։ Սա միանդամայն հասկանալի յէ, զորովհետև տեղական
Խորհուրդների ընտրությունները պետք է կատարվեն միաժամանակ
մի որվա ընթացքում միևնույն ընտրական տեղամասում։ Յուրաքան-
չյուր ընտրող նույն տեղամասում միաժամանակ քվեարկելու յէ մի-
քանի Խորհուրդների գեղուտատության թեկնածուների համար։ Այս-
պես, որինակ, ավտոնոմ հանրապետությունների տերիտորիայում
ապրող ընտրողները քվեարկելու յեն ըստ յերկու ընտրական ոկրուգի
յերկու Խորհրդի համար։ շրջանային Խորհրդի ընտրական ոկրուգի և
գյուղական կամ քաղաքային Խորհրդի ընտրական ոկրուգի, բացառու-
թյամբ հանրապետական յինթարկման քաղաքների (վարտեղ ուսյոնների
քաժանում չկա)։ այստեղ ընտրողները քվեարկելու յեն մի քաղաքա-
յին Խորհրդի համար (ուսյոնների քաժանուած հանրապետական յին-
թարկման քաղաքներում նույնպես ըստ յերկու ոկրուգի—քաղաքային և
ուսյոննական Խորհրդի համար)։ Մարզային կամ ոկրուգային (վարչա-
կան և ազգային ոկրուգներ) քաժանում ունեցող միութենական հան-
րապետություններում ընտրողները միաժամանակ քվեարկելու յեն ըստ
յերեք ընտրական ոկրուգի յերեք Խորհրդի համար։ մարզային կամ
ոկրուգային Խորհրդի ընտրական ոկրուգի, շրջանային Խորհրդի ընտ-

բական ոկրուգի և քաղաքային կամ գյուղական Խորհրդի ընտրական ոկրուգի . իսկ յեթե վարչական կամ արդային ոկրուգը մարդային յենթարկում ունի, ապա ընտրողները մարդի հետ միասին քվեարկելու յեն նաև ըստ չորրորդ ընտրական ոկրուգի՝ ոկրուցային Խորհրդի ընտրության համար : Խայտնների բաժանված մարդային յենթարկում ունեցող քաղաքներում ընտրողները պետք է քվեարկեն նմանապես ըստ յերեք ընտրական ոկրուգի (մարդ, քաղաք, քաղաքային ռայոն), իսկ ռայտնների չբաժանված մարդային յենթարկման քաղաքներում ընտրողը քվեարկելու յերկու ոկրուգի յերկու խորհրդի համար : ԱԽԾՍՀ-ում ավտոնոմ մարզերի տերիտորիայում ապրող ընտրողները միաժամանակ քվեարկելու յեն ըստ չորս ընտրական ոկրուգի (յերկիր, մարզ կամ ոկրուգ, ռայոն, քաղաք) կամ գյուղխորհուրդ) : Յեկմիայն Խաբարովսկի յերկիրի կամ չափկայի մարդի մեջ մտնող Զուկուտսկի և Կորյակսկի ազգային ոկրուգների տերիտորիայում ապրող ընտրողները միաժամանակ պիտի քվեարկեն ըստ հինգ ընտրական ոկրուգի (աշխատավորների դեպուտատաների յերկրային, մարդային, ոկրուցային, ըրջանային, քաղաքային կամ գյուղական Խորհրդի համար) :

Վորակեսպի ընտարողները քվեարկելիս մի տեղամասից չանցնեն դեպի մյուսը, ընտարական կանոնադրությունը նախատեսում է ընտրական տեղամասեր կազմել ըստ այն բոլոր ընտրական ոկրուգների քվեարկողներից բյուետեններն ընդունելու համար, վորոնցով ընտրողը քվեարկում է:

Բնտրական տեղամասեր կազմում են քաղաքներում աշխատավորաների գեղուտատների քաղաքային Խորհուրդները, ոայժնական բաժանում ունեցող քաղաքներում աշխատավորների գեղուտատների ոայժնական Խորհուրդները, դյուլական վայրերում՝ աշխատավորների դեպուտատների ընդունական Խորհուրդները:

Ընտրական կանոնագրության համաձայն ուղյունական և քաղաքա-
յին ընտրական հանձնաժողովների վրա պարտականություն է դրվում
հսկել աշխատավորների գեպօւտատաների Խորհուրդների համապատաս-
խան գործադիր կոմիտեների կողմից ընտրական տեղամասերը ժամա-
նակին կազմակերպելու վրա: Ընտրական տեղամասերը պետք է կազմ-
վեն վոչ ուշ, քան բնարություններից 50 որ առաջ:

Տեղական խորհուրդների ընտրական կանոնադրությունը սահմանում է ընտրական տեղամասերի նույն չափերը, ինչ և միութենական և ավտոնոմ հանրապետությունների Գերազույն Խորհուրդների ընտրության ժամանակ, որինակ, վոչ ավելի, քան 2 հազար բնակչություն ունեցող գյուղխորհրդի տերիտորիայում, իրբև կանոն, կազմվում և մի ընտրական տեղամաս յուրաքանչյուր ստանիցայում, գույղում, առողջում, վորն ունի 500-ից մինչև 2 հազար, բայց վոչ ավելի բնակչություն, կազմակերպվում և առանձին ընտրական տեղամաս:

Հապար հոգուց ավելի բնակիչ ունեցող գյուղխորհրդի և գյուղական բնակավայրի տերիստորիան բաժանվում է ընտրական տեղամասերի, հաշվելով բնակչության 1500—2000 հոգուն մի ընտրական տեղամաս:

500 հոգուց պակաս, բայց 300-ից վոչ պակաս, բնակչություն ունեցող գյուղերում կամ գյուղախմբերում կարող են կազմվել ընտրական տեղամասեր, յեթե այդ գյուղերի հեռավորությունը ընտրական տեղամասից 10 կիլոմետրից ավելի յե:

Հյուսիսային և արևելյան հեռավոր շրջաններում, վորտեղ դեռակում են մանր բնակավայրերը, ինչպես նաև Հյուսիսի ազգային օկրուզներում, լեռնային ու քոչվորական շրջաններում կարող են կազմվել ընտրական տեղամասեր 300 հոգուց պակաս, բայց 50 հոգուց վոչ ազգակաս բնակչությամբ: Միութենական ու ավտոնոմ առանձին հանրապետությունների քոչվորական ու լեռնային շրջանների համար նրանց ընկունած կանոնադրությամբ թույլատրվում է ընտրական տեղամասեր կազմել 25 հոգի բնակչությամբ:

Ինչպես վերև հիշատակվածից յերեւում և, ընտրական կանոնադրություններում հստակ կերպով սահմանված և, թե ինչ չափի ընտրական տեղամասեր են կազմվում գյուղական վայրերում: Նմանապես պարզորոշ և գրանցված կանոնադրություններում, թե ինչ մեծության ընտրական տեղամասեր են կազմվում քաղաքներում ու բանկորական ավաններում:

Այս քաղաքներն ու բանկորական ավանները, վորոնք ունեն ավելի քան 2 հազար բնակչություն, ընտրական տեղամասերի բաժանվում են 1500—2500 բնակչին մի ընտրական տեղամասի հաշվով:

Մոսկվա և Լենինգրադ քաղաքների ընտրական տեղամասերը կազմվում են 3 հազար բնակչին մի ընտրական տեղամասի հաշվով:

Զորամասերն ու զորական միավորումներն ընտրական կանոնադրության համաձայն առանձին ընտրական տեղամասեր են կազմում 50-ից վոչ պակաս և 1500-ից վոչ ավելի ընտրողներով:

Հիվանդանոցներում, ծննդատներում, սանատորիաներում, ինվարիդների տներում 50-ից վոչ պակաս ընտրողներով կազմվում են առանձին ընտրական տեղամասեր:

Միքանի կորպուս ունեցող հիվանդանոցներում թույլատրվում է առանձին կորպուսներում ընտրական տեղամասեր կազմել այն դեպքում, յերբ նրանցից յուրաքանչյուրում կա 50-ից վոչ պակաս ընտրող:

Այս հիվանդանոցներում ու այլ բուժական հիմնարկներում, վորոնել ընտրական տեղամասեր չեն կազմվում, թույլատրվում են հենց հիվանդանոցներում ու բուժական հիմնարկներում ընտրական բյուլետները հավաքել ընտրական հանձնաժողովների առանցված ան-

դամ մամների միջոցով: Այս դեպքում հիվանդանոցներին արվում են առանձին ընտրական արկղներ:

Ընտրությունների որը ճանապարհին գտնվող 25 հոգուց վեչ պակաս ընտրող ունեցող նավերը կարող են կազմել առանձին ընտրական տեղամասեր, վորոնք մտնում են ընտրական ոկրուգի մեջ նաև գրանցված վայրում:

Այն դեպքերում, յերբ նավի մեջ ընտրողների քանակը հավասար է աշխատավորների դեպուտատների քաղաքային կամ ռայոնական Խորհուրդների ընտրական ոկրուգի համար անհրաժեշտ բնակչության նորմային, կազմվում է աշխատավորների դեպուտատների քաղաքային կամ ռայոնական առանձին ընտրական ոկրուգ:

Ընտրությունների որը ճանապարհին գտնվող հեռավորության մարդատար գնացքներում կազմվում են ընտրական տեղամասեր այն ընտրող-ճամբար մամբուրդներից բյուլետեններն ընդունելու համար, վորոնք «քվեարկության իրավունքի վկայական» ունեն:

Ինչպես արգեն նշված է վերև, յուրաքանչյուր ընտրական տեղամասում ընտրական բյուլետեններ են ընդունվելու միքանի ընտրական ոկրուգներից: Որինակ, Մոսկվա քաղաքի ընտրական տեղամասերում ընտրական բյուլետեններն ընդունվելու յեն Մոսկվայի մարզային Խորհրդի ըստ մի ընտրական ոկրուգի, Մոսկվայի քաղաքային Խորհրդի մի ընտրական ոկրուգի և ռայոնական Խորհրդներից մեկի մոտավորակես Յ ընտրական ոկրուգի: Տվյալ դեպքում ընտրական տեղամասն ավելի փոքր կլինի, քան Մոսկվայի մարզային Խորհրդի ընտրական ոկրուգը, համաշատի կլինի Մոսկվայի քաղաքային Խորհրդի ընտրական ոկրուգին և ավելի մեծ կլինի, քան ռայոնական Խորհրդների ընտրական ոկրուգները: Մտայլում ե այնպես, վոր յուրաքանչյուր ընտրող պետք ե քվեարկի ըստ յերեք ընտրական ոկրուգի յերեք Խորհրդի (մարդ, քաղաք, ռայոն) ընտրության համար: Խոկ ընտրական տեղամասում ընտրական բյուլետենները պիտի ընդունվեն ըստ 5 ընտրական ոկրուգի: մեկն ըստ մարզային Խորհրդի ընտրության, մեկը՝ քաղաքային Խորհրդի ընտրության և, բացի սրանցից, յերեք ըստ ռայոնական Խորհրդի ընտրության:

Ցել առ միանգումայն հասկանալի յի, վորովհետեւ ընտրական կանոնադրությամբ յուրաքանչյուր ընտրող իրավունք ունի քվեարկելու ըստ յուրաքանչյուր Խորհրդի ընտրության մի ընտրական ոկրուգի, ըստ յուրաքանչյուր Խորհրդի ընտրության մի ընտրական ոկրուգի հատվյալ դեպքում նա պիտի քվեարկի տեղամասում յերեք Խորհրդի համար (մարդ, քաղաք, ռայոն) ըստ յերեք ընտրական ոկրուգի: Բայց տեղամասում բյուլետեններ են ընդունվում միևնույն ռայոնական Խորհրդամասում ոկրուգներից, խոկ յուրաքանչյուր ընդունվում է քվեարկի ու ռայոնական Խորհրդի ըստ մի ընտրական ոկրուգի: պետք ե քվեարկի ռայոնական Խորհրդի ըստ մի ընտրական ոկրուգի:

կան հանձնաժողովը վորոշի, թե այդ ոկրուգներից վորում ե քվեար՝ կում ընտրողը: Այստեղ ողնության են դալիս ընտրողների ցուցակները: Ընտրողներից ցուցակներում յուրաքանչյուր ընտրողի աղջանված դիմաց դրվում են այն ընտրական ոկրուգների համարները, ըստ վորոնց ընտրողը քվեարկում է: Այս համարներով ել Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարզում է, թե ըստ վո՞ր ոկրուգի յէ քվեարկում յուրաքանչյուր ընտրող:

Այսպիսով, բոլոր Խորհուրդներին ել յուրաքանչյուր ընտրող միաժամանակ քվեարկում է մի ընտրական տեղամասում:

Ընտրական տեղամասեր կազմելու կարգն ապահովում է բոլոր ընտրողների՝ թե՛ հիմանդրանոցներում բուժվող հիմանդրների, թե՛ գնացքներում ու նավերում գտնվող համբորդների, թե՛ հեռավոր Հյուսիսում ու քոչվորական շրջաններում և այլուր գտնվող ընտրողների մասնակցությունն ընտրություններին: Յուրաքանչյուր ընտրողի համար բոլոր պայմաններն ստեղծվում են, վորպեսզի նա կարողանա կատարել իր քաղաքացիական պարտքը, մասնակցել պետական իշխանության իր տեղական որդանների ընտրություններին:

Ընտրական տեղամասերի կազմակերպման կարգը մարդկանց նկատմամբ բոլցելիյան հոգատարության մի նմուշ է, ցայտուն ապացույց մեր ընտրական սիստեմի սոցիալիստական գեմոկրատիզմի:

Վոչ մի նման բան չկա և չի կարող լինել կապիտալիստական աշխարհում: Միանդամայն ուրիշ նպատակներ և հետապնդումը ընտրական տեղամասերի կազմակերպումը կապիտալիստական յերկրներում, վորտեղ բուրժուական ընտրական որենքները յելնում են վոչ թե աշխատավորների շահերից, այլ շահագործողների քաղաքական նկատառումներից:

Բոլոր կապիտալիստական յերկրներում ընտրական տեղամասերի կազմակերպումն, իրեն կանոն, թողնված են ներքին գործերի մինիստրության որդաններին: Այսպես, որինակ, Անդինայում, «Հրահանդընտրական գործակալին» հրահանդների ժողովածուի մեջ նշվում է, վորյեթե ընտրական կոմիսարը սխալ կազմակերպի ընտրական տեղամասերը, բայց «ապացուցի», վոր այդ «չի աղեղել ընտրությունների յելքի վրա», ապա նա դրա համար վոչ մի պատասխանատվություն չի կրում: Այս գեղքում պարզ է, վոր «ընտրությունների յելք» ստեղծված այսուղ ամենից առաջ հասկացվում է պայքարի յելքը հոգուտ շահագործող դասակարգերի:

Կապիտալիստական յերկրներում ընտրական տեղամասեր կազմելու հիմքում դրված ե առավելագույն հարմարության սկզբունք վոչ թե աշխատավոր ընտրողների, այլ իշխանությունների համար, ձեռնարկատերների համար, բուրժուական կուսակցությունների մեքենայությունների համար: Առանձնապես ցայտուն կերպով այս բանը գրսեոր-

վում է ֆրանսական ընտրություններում, վորտեղ, որինակ, արդեւ վում է առանձին ընտրական տեղամասերի ըաժանել այն տերիտորիան, վորտեղ գտնվում է մի անտեսատիրոջ պատկանող գույքը, թե կուզ և տվյալ կալվածքում ավելի շատ մարդ ապրելիս լինի, քան մի ընտրական տեղամասին ընկնող նորմայով: Ֆրանսիայում միշտ չե, վոր ընտրական տեղամաս կազմելու համար պահանջվող նորմայից նորյանի ավելի բնակչություն ունեցող բնակելի վայրում կարելի յէ կազմակերպել տեղամաս, յեթե այդ տեղը չունի «իր յեկեղեցին»:

Բոլոր կապիտալիստական յերկրներում ընտրական տեղամասեր կազմելիս հոգատարության հետք անգամ չկա աշխատավորների, առանձնապես հիմանդր-ընտրողների համար, այն ընտրողների համար, վորոնք ընտրությունների ժամանակ ստիպված են փոխելու իրենց ընտրակալուրը ընտրողների ցուցակները կազմելուց հետո:

Միայն մեզ մոտ ԽՍՀՄ-ում, սոցիալիզմի յերկրումն է, վոր իրոք խկական հոգատարություն և ցուցաբերվում յուրաքանչյուր ընտրողի նկատմամբ:

ՀՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

ԽՍՀՄ-ում աշխատավորների գեպուտատների բոլոր խորհուրդների ընտրության ղեկավարությունն իրագործում են ընտրական հանձնաժողովները՝ կազմված աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներից: Ընտրական հանձնաժողովներ կազմելու սիստեմը հետևյալն է. յուրաքանչյուր յերկրում ստեղծվում է յերկրային ընտրական հանձնաժողով, վորը զլիսավորում և աշխատավորների ղեպուտատների յերկրային Խորհրդի ընտրական ամբողջ աշխատանքը: Յերկրային Խորհրդի յուրաքանչյուր ընտրական սկզբունքում ստեղծվում է Ոկրուգային ընտրական հանձնաժողովը, վորը ղեկավարում է տվյալ ոկրուգի ղեպուտատի ընտրության աշխատանքը: Յուրաքանչյուր մարդում ստեղծվում է Մարզային ընտրական ամբողջ աշխատանքը: Մարզային նորհրդի յուրաքանչյուր ընտրական սկզբունքում ստեղծվում է Ոկրուգային ընտրական հանձնաժողովը, վորը ղեկավարում է տվյալ ընտրական ոկրուգի ընտրական աշխատանքը: Զենց այս սկզբունքով ել կազմվում են ոկրուգային (վարչական և պահանջման ոկրուգներ), շրջանային, քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրական հանձնաժողովներ:

Ցուրաքանչյուր աղքային և վարչական սկզբունքում ստեղծվում են ոկրուգային Խորհրդի ընտրական հանձնաժողովներ, և սրա հետ միասնական կազմական սկզբուգին և վարչական սկզբուգի ոկրուգային Խորհրդի յուրաքանչյուր պահանջման ոկրուգների և վարչական սկզբուգի ոկրուգային ընտրական չյուր ընտրական ոկրուգում ստեղծվում են Ոկրուգային ընտրական հանձնաժողովներ, վորոնք ղեպուտատի ընտրական հանձնաժողովների վորոնք ուղարկում են միայն տվյալ ընտրական հանձնաժողովներ:

ոկրուգի աշխատանքը։ Քաղաքային և գյուղական Խորհուրդներում ստեղծվում են համաքաղաքային և համագյուղական ընտրական հանձնաժողովներ, վորոնք գլխավորում են քաղաքային և գյուղական Խորհրդի ընտրական աշխատանքը։ Սրա հետ միասին քաղաքային և գյուղական Խորհրդի յուրաքանչյուր ընտրական ոկրուգում ստեղծվում են Ոկրուգային ընտրական հանձնաժողովներ, վորոնք զեկավարում են միայն իրենց ընտրական ոկրուգի գեպուտատների ընտրությունը։ Յենելով սրանից, գուրս ե գալիս, վոր այս ընտրական կամպանիային մենք կունենանք 69.243 համայնքներային, համամարդակային, համառկրուգային (ազգային և վարչական ոկրուգներ), համաշրջանային, համաքաղաքային, համապատասխան համագյուղական, համավայանային ընտրական հանձնաժողովները (ըստ Խորհուրդների թվի) և, բացի սրանից, ավելի քան 1.300.000 Ոկրուգային ընտրական հանձնաժողովների, այսինքն՝ ըստ աշխատավորների գեպուտատների յերկրային, մարզային, ոկրուգային, շրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային Խորհուրդների ընտրական ոկրուգների թվի։

Վորչափով վոր բոլոր Խորհուրդների ընտրական տեղամասերն ընդհանուր են, այնչափ ել տեղամասերին կից կազմվող Տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընդհանուր են աշխատավորների գեպուտատների բոլոր Խորհուրդների ընտրության համար։ Ընդամենը տեղական Խորհուրդների ընտրություններին կազմվելու յեն մինչև 150 հազար Տեղամասային ընտրական հանձնաժողովները, վորոնք ել ընտրուգներից բյուլետենները կընդունեն ըստ մի միլիոն յերեխարյուր հագար ընտրական ոկրուգների։

Այս թվերից յերեսում ե, վոր միջին հաշվով յուրաքանչյուր տեղամասում ընտրական բյուլետեններն ընդունելու յեն ըստ ավելի քան 8 ընտրական ոկրուգի։

Բոլոր ընտրական հանձնաժողովները, ինչպես նշվեց վերև, կազմվում են աշխատավորության հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում աշխատավորների գեպուտատների Խորհուրդների կողմից։

Աշխատավորների հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների ներկայացուցիչներն ընտրական հանձնաժողովի համար առաջարկվում են արհեստական միություններից, կոմունիտական կուսակցական կազմակերպություններից, կոմյերիտմիությունից և ուրիշ հասարակական կազմակերպություններից (Պաջը, Մոպր, գիտական ընկերություններ և այլն), ինչպես նաև բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովներից ըստ ձեռնարկությունների ու հիմնարկների (Փաքրիկաներ, գործարաններ, խորհանակություններ, ՄՏԿ-ներ, հիմնարկներ), այլ և գյուղացիների ընդհանուր ժողովներից ըստ կորոնտեսությունների։

Բնական ե, վոր հասարակական կազմակերպությունների կամ աշխատավորական ընկերությունների ամեն մի ներկայացուցիչ, ինչպես նաև ընդհանուր ժողովների ներկայացուցիչները, վորոնք գործողվում են ընտրական հանձնաժողովների մեջ, պետք ե լիազորված լինեն համապատասխան կոմիտեյի կամ ընդհանուր ժողովի վորոշմամբ։

Այս ընտրական կամպանիային աշխատավորության հասարակական կազմակերպություններն ու ընկերությունները բոլոր ընտրական հանձնաժողովների մեջ պետք ե առաջադրեն 6—7 միլիոն մարդ։ Սա ակտիվի բացառիկ չափով հսկայական բանակ է, վորին յերկիրը կվստահի տեղական Խորհուրդների ընտրությունները։

Ընտրական կանոնադրությունը սահմանում է Խորհուրդների կողմից ընտրական հանձնաժողովները հաստատելու հետևյալ կարգը։

Յերկրային և Մարզային ընտրական հանձնաժողովները հաստատվում են միութենական հանրապետությունների Գերագույն Խորհուրդների Նախագահության կողմից, իսկ Երջանային, Քաղաքային և Գյուղական ընտրական հանձնաժողովները հաստատվում են աշխատավորների գեպուտատների վերադաս Խորհուրդների գործադիրի կոմիտեների (Երջանային և Քաղաքային ընտրական հանձնաժողովները՝ մարզային յենթարկման քաղաքաներում՝ մարզային Խորհուրդների գործադիրի կոմիտեների կողմից, գյուղական ընտրական հանձնաժողովները՝ աշխատավորների գեպուտատների վրջանային խորհուրդների կողմից)։ Մարզային բաժանում չունեցող հանրապետություններում շրջանային ընտրական հանձնաժողովները և հանրապետական յենթարկման քաղաքներում քաղաքային հանձնաժողովները հաստատվում են միութենական կամ ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների Նախագահությունների կողմից վոչ ուշ քան ընտրություններից 55 որ առաջ։ Ոկրուգային ընտրական հանձնաժողովները հաստատվում են աշխատավորների գեպուտատների ընտրական ոկրուգներ կազմած Խորհրդների գործադիրի կոմիտեների կողմից վոչ ուշ, քան ընտրություններից 50 որ առաջ։

Քաղաքներում տեղամասային ընտրական հանձնաժողովները հաստատվում են աշխատավորների գեպուտատների գաղաքային Խորհուրդների կողմից, իսկ ուստինների բաժանված քաղաքներում աշխատավորների գեպուտատների ուստինների կողմից, գյուղական վայրերում՝ աշխատավորների գեպուտատների շրջանային Խորհրդների կողմից վոչ ուշ, քան ընտրություններից 45 որ առաջ։

Ընտրական հանձնաժողովների կազմակերպման այլպիսի սիստեմն առանձին ուժով ընդդում է մեր ընտրական սիստեմի իսկական գեղարկատիզմը։ Աշխատավորների գեպուտատների Սորհուրդների ընտրությունները կղեկավարեն 7 միլիոն աշխատավորներ։ Մեր յերկրի

Հավագույն զավակների մի հսկայական բանակ պիտի կատարի մեծ ու պատասխանառու պետական աշխատանք:

Հարց և ծագում, թէ ինչ հիմնական փունկցիաներ և դնում ընտրական կանոնադրությունը ընտրական հանձնաժողովների վրա:

Յերկրային, Մարզային, Ոկրուգային, Երջանային, Քաղաքային, Գյուղական ու Ավանային ընտրական հանձնաժողովները Խորհրդի ընտրության ընթացքում յերկրի, մարզի, շրջանի, քաղաքի, գյուղի ու ավանի տերիստորիայում հսկում են ընտրական կանոնադրության անշեղ կատարմանը, նրանք քննարկում են Ոկրուգային և Տեղամասային ընտրական հանձնաժողովների անձիշտ գործունեյության վերաբերյալ գանգատները և վրոշումներ հանում այդ դանդասների առթիվ, սահմանված ձևով ընտրական բյուլետեններ են պատրաստում աշխատավորների գեղագուտաների համապատասխան Խորհրդի ընտրությունների համար, արձանագրում են Խորհրդի մեջ ընտրված գեղագուտաներին:

Հիշատակված փունկցիաների կատարումը հսկայական քաղաքական հշանակություն ունի: Համապատասխան Խորհրդի յուրաքանչյուր ընտրական հանձնաժողովը պետք է հետեւ, վոր ընտրության ընթացքում ձիշտ իրականացվի ընտրական կանոնադրությունը: Այս փունկցիան կատարում ե այն Խորհրդի ընտրական հանձնաժողովը, վորի ընտրությունները նա զեկավարում է:

Հարկավոր է առանձին ուշադրություն դարձնել նաև ընտրական հանձնաժողովների այնպիսի մեծ ու պատասխանառու աշխատանքի վրա, վորպիսին ե ընտրական բյուլետենների պատրաստումը: Յուրաքանչյուր յերկրային, մարզային, ոկրուգային, շրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային ընտրական հանձնաժողով պետք է պատրաստի Խորհրդի յուրաքանչյուր ընտրական ոկրուգի համար պահանջվող քանակությամբ բյուլետեններ: Այս աշխատանքը շատ բարդ է, և նրա կատարման համար պետք է խնամքով նախապատրաստվել: Անհրաժեշտ է հաշվի առնել, վոր ընտրական բյուլետեններով պետք է ապահովված լինեն յուրաքանչյուր ընտրական ոկրուգի բոլոր ընտրողները: Բյուլետենները վորոշակի գույն պիտի ունենան ու ձե՛ հաստաված միութենական կամ ալտոնոմ հանրապետության Գերադույն Խորհրդի նախագահության կողմից:

Բյուլետենների պատրաստման աշխատանքը պետք է կատարվի արագ և լավ վորակով: Ուստի մինչև ընտրական բյուլետեններ պատրաստելը հիշատակված ընտրական հանձնաժողովները պետք է հոգ տանեն, վոր նրանք ունենան ընտրական բյուլետենների ձևեր՝ հաստաված համապատասխան միութենական կամ ալտոնոմ հանրապետության նախագահության կողմից, բոլոր ընտրական ոկրուգների անունները և տվյալներ յուրաքանչյուր ընտրական ոկրուգի համար առա-

ջառըլած յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ, սահմանված գույնի թուղթ բյուլետեններ պատրաստելու համար:

Առանձին խնամքով պետք է մոտենալ գյուղական Խորհուրդների ընտրական բյուլետենների պատրաստմանը: Բնական ե, վոր ընտրական ոկրուգների մանր լինելու պատճառով հնարավոր չե գյուղական Խորհրդի յուրաքանչյուր ընտրական ոկրուգի համար պատրաստել տպագանցում տպված ընտրական բյուլետեններ: Ուստի պետք է նախ պատրաստել գյուղական Խորհրդի ընտրական բյուլետենների բանկներ, իսկ հետո արդեն գյուղական ընտրական հանձնաժողովն արդ բլանկների մեջ յուրաքանչյուր ոկրուգի համար առանձին կմըտցնի գեղագուտատի թեկնածուի ազգանունը և թեկնածու առաջաղած կազմակերպության անունը գրամեքենայով կամ ձեռքով, ընդվորում այս գեղեցերում միենույն ընտրական ոկրուգի ընտրական բյուլետենների բլանկներն անհրաժեշտ ե լրացնել մի ձեռագլուխ և մի դույնի թանաքով:

Շրջանային և Քաղաքային ընտրական հանձնաժողովները պետք է նաև հետևեն ընտրողների ցուցակները ժամանակին կազմելու և բոլորին դրանց իրագեկ դարձնելու, ընտրական տեղամասերը ժամանակին կազմակերպելու վրա: Մարզերի չբաժանված հանրապետություններում Շրջանային ու Քաղաքային ընտրական հանձնաժողովները, բացի սրանից, նշանակում են ընտրական տեղամասերի կարգային համարներն ըստ շրջանի և քաղաքի: Ընտրական կանոնադրությունները նաև նախատեսում են, վոր գյուղական և ավանային ընտրական հանձնաժողովներն ընտրական բյուլետեններ մատակարարեն անմիջականորեն Տեղամասային ընտրական հանձնաժողովնին:

Յերկրային, մարզային, շրջանային, քաղաքային, գյուղական ու ավանային Խորհրդների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները հիմնականում կատարում են հետեւյալ փունկցիաները: Արձանագրում են ոկրուգի համար առաջարկված գեղագուտատի թեկնածուներին՝ պահպանելով միութենական և ավտոնոմ հանրապետությունների Սահմանադրության և ընտրական կանոնադրության պահանջները, Տեղամասային ընտրական հանձնաժողովներին մատակարարում են սահմանված ձեռով ընտրական բյուլետեններ, հաշվում են ձայները և պարզում ընտրությունների արդյունքներն ըստ ոկրուգի և այլն:

Գյուղական և ավանային Խորհրդների Ոկրուգային ընտրական հանձնաժողովները Տեղամասային ընտրական հանձնաժողովներին ընտրական բյուլետեններ չեն մատակարարում: Այս փունկցիաները, ինչպես նշվեց վերև, կատարում են գյուղական և ավանային ընտրական հանձնաժողովները:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղամասի ընտրողներին իրագեկ և դարձնում ընտրությունների որվա և տեղի մասին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրական տեղամասում ընդունում են ընտրական բյուլետեններ ըստ բոլոր այն ոկրուգների, ըստ վորոնց քվեարկում և տվյալ ընտրական տեղամասի ընտրողը. Հաշվում են յուրաքանչյուր դեպուտատի թեկնածության համար արված ձայներն ըստ յուրաքանչյուր ընտրական ոկրուգի:

Պետք են նշել, վոր Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքն այս ընտրական կամպանիայում ավելի բարե կլինի: Ինչպես արդեն նշվեց վերև, յուրաքանչյուր ընտրական տեղամասում ընտրական բյուլետենները պետք են ընդունվեն մի շարք ընտրական ոկրուգներից: Պարզաբանելու համար բերենք հետևյալ որինակը. Գյուղ-խորհրդի տերիտորիայում ապրում են 1500 հոգի, և ամբողջ գյուղ-խորհրդը կազմում են մի բնակավայր, այնտեղ կազմակերպված են միայն մի ընտրական տեղամաս: Այս ընտրական տեղամասն ընդհանուր կլինի մարզային Խորհրդի, ըրջանային Խորհրդի և գյուղական Խորհրդի ընտրության համար: Տվյալ գյուղական Խորհրդի տերիտորիայում կլինեն գյուղխորհրդի ընտրության 15 ընտրական ոկրուգ (100 մարդուն մի ոկրուգ), ըրջանային Խորհրդի ընտրության յերկու ընտրական ոկրուգ (750 հոգուն մի ոկրուգ) և, բացի սրանից, տեղամասում ընտրական բյուլետեններ կընդունվեն ըստ մարզային Խորհրդի ընտրական ոկրուգի: Բայց այս բոլոր ոկրուգների Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր են բյուլետեններ ընդունել ընտրողներից և հաշվել արված ձայների քանակը: Հասկանալի յէ, վոր այս աշխատանքը շատ ավելի դժվար կլինի, քան անցյալ ընտրություններին, յերբ տեղամասում բյուլետենները ընդունվում եյին ամենաշատն ըստ յերեք ընտրական ոկրուգի: Տեղամասային ընտրական հանձնաժողովները պետք են հաշվի առնեն այս բոլոր դժվարությունները, աշխատանքի բարդությունը և բավ նախապատրաստվեն ընտրությունների որպան:

